

Միջազգային Գրամատունը երկ հարիւր միլիոն տոյար օժանդակութիւն կատարեց Արժանքինի, ընկերային օրագիրներու յաջողութեան համար: Այսուհանդերձ, այս գումարը հակառակ ուշագրաւ ըլլալուն ոչինչ է երկրի մը համար, որ ունի հարիւրաւոր միլիարտ տոյարի պարտք, առանց՝ քանդուած տնտեսութիւն մը, դիտել կու տան մեկնաբաններ, աւելցնելով, որ արժանքինեան կառավարութիւնը շատ աւելին կ'ակնկալէ միջազգային բնասանքին:

Խմբագրական

ԿԱՍԵՅՆԵԼ ՆԱՀԱՆՁՐ՝  
«ԵՐԳՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ»  
(Ուսուցիչի Օրուան առիթով)

Ընկալեալ սովորութեամբ «Ուսուցիչի Օր»ը հայ հրատարակագրութեամբ կը վերածուի հայ ուսուցիչի եւ հայ դպրոցի օրուան: Եւ բնականաբար կը խօսուի հայ ուսուցիչի պոհողութեան, հայ դպրոցի անփոխարինելիութեան, անձնագոյնութեան, գիտակցութեան եւ նկարագրային նման առաքինութիւններու մասին:

Ի հարկ է այս բոլորը մեծ դերակատարութիւն ունեցած են ու կը շարունակեն ունենայ հայեցի կայմաւորման, հայ դպրոցի պահպանման եւ սերունդներու դաստիարակութեան ազգանուէր աշխատանքին մէջ:

Սակայն պէտք է ընդունիլ միաժամանակ, մասնաւորապէս ներկայ պայմաններուն մէջ, որ առարկայական համապատասխան պայմաններու, արդար վարձատրութեան եւ դպրոցավարարու մասնագիտական մտնեցումի բացակայութեան պարագաներուն, հայ դպրոցին նահանջը կը ստանայ շատ աւելի արագ կշռոյթ՝ «երգով կամ առանց երգի»:

Հայ ուսուցիչին ներկայ ա կիսիթար վիճակը արդարացում չունի: Եթէ այսօր չկայ հայ ուսուցիչը, վաղը գոյութիւն չ'ունենար հայ դպրոցը: Իսկ եթէ վաղը չկայ հայ դպրոցը, միւս օրը գոյութիւն չ'ունենար յառաջիկայ սերունդը: Կը վտանգուի ամբողջ գաղութի գոյութիւնը:

Այգային իշխանութիւններ, կրթական համակարգի պատասխանատուներ եւ դպրոցի տնօրէնութիւններ պարտաւոր են փրկելու հայ ուսուցիչը իր ներկայ իրավիճակէն: Կրթական գործին յծուած պատասխանատուներէն կ'ակնկալուի սիսականգային մթնոլորտով, արտակարգ դրութեամբ դպրոցավարական համապատասխան միջոցառումներու որդեգրում՝ արժանապատի կենցաղ ապահովելու համար հայ ուսուցիչին: Այլապէս, պիտի շարունակուի հայ աշակերտին հոսքը դէպի պետական կամ տեղական կրթական հաստատութիւններ, տակաւ պիտի ամայնան մեր կրթական օճախները, ի վերջոյ վտանգելով իր բանաստեղծ գաղութի գոյատեւումը:

Լիբանանահայ գաղութը, որուն հայկական վարժարաններուն մէջ հասակ առած ու կայմաւորուած երէկուան աշակերտները դարձան ազգային, հասարակական, քաղաքական գործիչներ, մամլոյ խմբագիրներ, Հայ Դատի նախագիւղներ, նահատակներ: Ղեկավարեցին ոչ միայն իրանահայ գաղութի ազգային-քաղաքական կեանքը, այլ նաեւ կայմակերպեցին այլ գաղթօճախներու աշխարհացրիւ հայութեան հասարակական աշխատանքները:

Գաղութի ամբողջական ներուժի օգտագործումով պարտիք փրկել հայ ուսուցիչը եւ արդի պայմաններուն թելադրած արհեստագիտական եւ մասնագիտական միջոցներու որդեգրումով՝ հայ կրթութեան ընդհանուր համակարգը:

# ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

1500 L.Ո. 75ԳՊ ՏԱՐԻ, ԹԻՒ 5 (21054) ՇԱԲԱԹ, 9 ՍԱՐՏ 2002 10 ԷՁ

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ  
«ԱԶՂԱԿ» Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՎ  
ՇԱՐԺԱՊՈՍԿԵՐԻ ՄՐՅԱՆԹԻՆ

Այսօրուան մեր 9րդ էջով կու տանք «Մասնակցէ՛ եւ շահէ՛» մրցանքը, որ կ'առնուի 24 Մարտին տեղի ունենալիք ֆիլմաշխարհի «Օսթարններու 74րդ մրցանակաբաշխութեան: Մեծ պարգեր՝ Պէյրութ - Լոնտոն - Պէյրութ օդանայի տոմսակ մը, ինչպէս նաեւ այլ նուէրներ: Մանրամասնութիւնները՝ 9րդ էջ:

## ՇԱԿԱՌԱԿ ԶԻՆԻԻ ՇՐՋԱՆ ԳԱԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ՝ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԱՆԸՆԴՄԷՋ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՂԵՍԻՆՑԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ



Իսրայէլեան հրասայլերուն, ուղղաթիւներուն եւ էֆ. 16երուն դիմաց՝ պաղեստինցի պատանգներ կը պատրաստեն իրենց պարստիկները, ի խնդիր ինքնիշխան ապրելու իրաւունքին...

Ամերիկացի յատուկ պատուիրակ Անթրնի Զինի Միլին Արեւելք ուղարկելու որոշումը որեւէ փոփոխութիւն չյառաջացուց շրջանին մէջ, ուր բախումներն ու բռնարարները շարունակուեցան:

Իսրայէլեան բանակը շարունակեց յարձակումներն ու ներխուժումի գործողութիւնները պաղեստինեան ինքնավար շրջաններուն ու գաղթականաններուն դէմ: Հինգշաբթի գիշերուան միջին ժամէն երէկ կէսօրին աւելի քան 34 պաղեստինցիներ սպանուեցան իսրայէլեան ուժերուն կողմէ:

Զոհերուն կարգին էր ինք տարեկան մանուկ մը, յայտնեցին պաղեստինցի պաշտօնատարներ: Դէմտեր ըսին, որ Հինգշաբթիին Ուրբաթ լուսնոյ գիշերը ցարդ ամէնէն արիւնայի պահերէն մէկը կը նկատուի:

Կազախի հրէական բնակեցման մէկ վայրին մէջ, պաղեստինցի գինեալ մը հինգ իսրայէլացիներ սպաննեց, պատճառ դառնալով, որ իսրայէլեան բանակը պատճառանքով միջին օրէն ներխուժէ պաղեստինեան գիւղ մը, իսկ

Այսրայէլեան մէջ այ՝ հրեաներ յարձակին Նապլուսի մօտ գտնուող Հուարա գիւղին վրայ: Ականատեսներ յայտնեցին, որ հրեայ ընկալիչները Հուարա մտան 25 ինքնաշարժներով եւ սկսան կրակ բանալ պաղեստինցիներուն վրայ: Իսրայէլի ոստիկանութիւնը յայտնած էր, որ գինեալներն ու ոստիկանները Հուարա ներխուժող հրեաներուն հետ, որոնք մտած էին լուծելու համար վրէժը իսրայէլացի մը, որ վիրաւորուած էր պաղեստինցիներուն կողմէ: Ոստիկանութիւնը յայտնեցաւ զսպել հրեայ ամբողջը, որ կարճ ատեն մը ետք դուրս ելաւ Հուարայէն: Ոստիկանութիւնը նաեւ ձեռքարկեց քանի մը հրեաներ, որոնք առաջնորդած էին ամբողջը:

Իսրայէլեան բանակը ուղղաթիւներու եւ հրասայլերու օժանդակութեամբ Բեթղեհէմ մտաւ երէկ: Բանակին մէկ պաղեստինցիներուն միջեւ բախումը իսկ պաղեստինցի վեց գոհեր ու տասնեակ մը վիրաւորներ: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն որոշած է շարունակել յարձակումները պաղեստինեան շրջաններուն դէմ, մինչեւ որ անոնք վերջ տան ծայրայեղականներու գործողութիւններուն:

Անցնող քսանչորս ժամերուն ամէնէն բուռն բախումը տեղի ունեցաւ Կազախի հարաւային շրջանին մէջ, ուր իսրայէլեան բանակը ներխուժած էր իսրայէլացի զինուորականները, որոնք ծայրայեղականները ձեռնարկելու ու գէնքեր բռնագրաւելու պատրուակով կը մտնէին պաղեստինեան շրջանները, ինչպէս մէջ սպաննեցին 17 պաղեստինցիներ, որոնք կարգին է շրջանին մէջ պաղեստինեան ապստամբութեան ուժերու հրամանատարը Ահմէտ Մեթրէփ: Սեպտեմբեր 2000ին ծայր տուած

## ՄԻԿԷԼ ԱՆԽԷԼ ՄՈՐԱԹԻՆՈՍ ԵՒ ՆԱԽԱԳԱՏ ԼԱՏՈՒՏ ՎԵՐ Կ'ԱՌՆԵՆ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ ԳՈՒՄԱՐՈՒԵԼԻՔ ԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՏԱԺՈՂՈՎԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական Միութեան Միջին Արեւելքի խաղաղութեան հարցերու յատուկ քարտուղի Անխէլ Մորաթինոս երէկ այցելութիւններ տուաւ հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, հեռաձայնային խորհրդակցութիւն ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրիի հետ, ապա տեսակցեցաւ մշակութիւնի նախարար Ղասսան Սալամիի հետ:



Նախագահ Լահուտ եւ Մորաթինոս

Այս առիթով կատարած իր յայտարարութիւններուն մէջ, Մորաթինոս յորակցութիւն յայտնեց շրջանի խաղաղութեան համար Միութեան Արաբիոյ գահաժառանգ իշխանի նախաձեռնութեան եւ յոյս յայտնեց, որ Պէյրութի մէջ գումարուելիք արաբական վեհաժողովը կը նպաստէ խաղաղութեան գործընթացի վերականգնման:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ Մարտ 27ին եւ 28ին Պէյրութի մէջ գումարուելիք արաբական վեհաժողովը յատուկ կարեւորութիւն կը ներկայացունէ, որովհետեւ անիկա այս մակարդակի առաջին արաբական ժողովն է Սեպտեմբեր 11ի դէպքերէն ետք, ինչպէս նաեւ անիկա առիթ պիտի ըլլայ արտայայտելու արաբներուն իսկական կեցածքները:

Նախագահ Լահուտ Մորաթինոսի ըսաւ, որ Պէյրութի վեհաժողովը առիթ պիտի հանդիսանայ նաեւ վերահաստատելու արաբական երկիրներու միութեան կարեւորութիւնը, դիմագրաւելու համար մարտահրաւիրները, մասնաւորապէս՝

Շար.՝ էջ 3

### ՍԱՐՏ 8Ի ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

### Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ՆԱԽԱԳԱՋ ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԸ

Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ, Մարտ 8ի Յեղափոխութեան տարեդարձին առիթով, շնորհաւորական հետեւեալ հեռագիր յղեց Սուրիոյ նախագահին:

Սուրիոյ վսեմութիւն նախագահ տոքթ. Պաշշար Ասատ, Նախագահ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան

Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն Զեքը վսեմութեան եւ Սուրիոյ եղբայրական ժողովուրդին կը ներկայացնէ իր սրտագին եւ ջերմ շնորհաւորութիւնները՝ Մարտ 8ի յեղափոխութեան տարեդարձին առիթով եւ Զեքի կը մաղթ յարատեւ յառաջդիմութիւն եւ բարգաւաճում: Ան նաեւ կ'աղօթէ Աստուծոյ, որ պահպանէ Զեքի իբրեւ վահան, որ կը պաշտպանէ արաբական իրաւունքները՝ իսրայէլեան ոտնձգութիւններէն եւ դաւերէն:

Վստահ եմ, որ Զեքի ղեկավարութեամբ բռնագրաւելի բոլոր հողերը պատասխանելու համար մղուող պայքարը պիտի շարունակուի, հակառակ այս ճակատագրական ու բախտորոշ հանգրուանին ամբողջ արաբական շրջանին ուղղուած սպառնալիքներուն եւ մարտահրաւիրներուն:

Անկեղծօրէն Զեքի կը մաղթեմ յաջողութիւն, իսկ Սուրիոյ յառաջդիմութիւն ու բարգաւաճում:

8 Մարտ 2002 Պէյրութ  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

### ՀԱԿԱՂԱՐՁԵԼՈՎ ԶՕՐ. ԶԻԼԻՆՃԻ ԷՃԵԻԹ ԿԸ ՄՆԱՅ ՀԱՆԱՏԱՐԻՄ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԷՋԻՆ

Թուրքիոյ վարչապետ Պիլիքնի ինքնիշխան գործարար մը կողմէ օր մը առաջ կատարուած է: Միութեան դէմ քննադատութեան, երէկ յայտնած է, թէ Թուրքիա պէտք չէ արտօնէ, որ Ե. Միութեան հետ պարբերական լարուածութիւնը զայն հեռացնէ Եւրոպայի մէջ իր ճակատագրէն:

Զօրավար Թունչէր Քիլիքնի Հինգշաբթի օր Ե. Միութիւնը ամբաստանած էր, ըսելով, որ անիկա Թուրքիոյ որեւէ ձեռով գործող չէ կանգնած կենսական հարցերու գծով, ակնարկելով Եւրոպական պետութիւններուն «հանդուրժողութեան», Թուրքիոյ մէջ «հազարեկուցութեան» գործող կանգնողներու հանդէպ (անշուշտ ըստ Անգարայի - «Ա.» -):

Ան յայտնած էր, թէ Ե. Միութիւնը ոչինչ ըրած է Թուրքիոյ համար, որ անդամակցութեան թեկնածու է:

Քիլիքնի խօսքերը աւելի եւս գարկ տուած են վերջերս ծայր տուած բանավեճերու երկրին մէջ հաւանական անկայունութեան գծով, որ, ըստ կարգ մը կողմերու, կրնայ հետեւել ըլլալ ազատական բնոյթի բարեկարգումներու: Թուրքիա պէտք է ձեռնարկէ այդ բարեկարգումներուն՝ հասնելու համար մարդկային իրաւանց գծով Ե. Միութեան շափանիչներուն, նախքան անոր անդամակցելը:

Ինքնիշխան շեշտած է, թէ Թուրքիոյ պէտք չէ հեռանան այդ գաղափարէն:

Եւրոպական Միութեան լիբրալ անդամակցութիւնը Թուրքիոյ անհերքելի եւ անհրաժեշտ իրաւունքն է, ըսած է ան:

Հետեւեալ օր պէտք չէ յուսահատել անդամակցութեան ճամբուն վրայ մեր դիմագրուած կամ դիմագրուելիք դժուարութիւններուն եւ խոչընդոտներուն պատճառով եւ այլ փոխընտրանքներ փնտրել, դիտել տուած է ան:

Ինքնիշխան գործարար Քիլիքնի կամ իր կառավարական ընկերակցութեան երեք կուսակցութիւններուն միջեւ ծայր տուած դժուարութիւններուն չէ ակնարկած:

Սակայն ան յատկապէս անհրաժեշտ նկատած է հակադարձել հակաբերական միութեան զգացումներուն, որոնք կրնան Պրիւքսիլի հետ յարաբերութիւնները լարել:

«Պարագայքար Ե. Միութեան եւ մեր միջեւ բանավեճեր եւ անհասկացողութիւններ կրնան ըլլալ: Սակայն հետեւել իրականութիւնը կարելի չէ փոխել: Թուրքը աշխարհագրականօրէն, պատմականօրէն եւ շակութեամբ անուժով երոպական է», աւելցուցած է ան:

Ինքնիշխան գծած է, թէ Թուրքիոյ դիրքը իբրեւ իսլամ երկիր մը, որ Եւրոպայի, Միջին Արեւելքի եւ Ասիոյ հետ կապեր ունի, աւելի եւս անհրաժեշտ կը դարձնէ մեծամասնութեան քրիստոնեայ Ե. Միութեան անոր անդամակցութիւնը:

Զօր. Քիլիքնի առաջարկած էր, որ հրաժարելով Եւրոպայէն, Թուրքիա դէպի Իրան եւ Թուսիա դառնայ, պահպանելով Մ. Նահանգներու հետ իր կապերը:

(ՌՈՅՈՒՐԸ)





# ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ

Ստորեւ՝ կու տանք «Ուսուցչաց Օր»-ուան առիթով Լիբանանի հայոց քեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի պատգամը՝ ազգային վարժարաններու տնօրէնութիւններուն եւ ուսուցչական կազմերուն:

Ուսուցչաց տօնին առիթով ուրախութիւնը ունենցողներու թիւը եւ շքանշաններու շնորհաւորելու թիւը:

Սերունդներու դաստիարակութիւնը անհրաժեշտ է ազգի մը գոյութեան պահպանման, եւ դաստիարակութեան որակն է չափանիշը անոր ազգային ժառանգութեան հարստութեան: Տըւեալ ազգի մը սերունդներու դաստիարակութեան խորհրդանշանը Ուսուցչիչ - Դաստիարակն է:

Այս իմաստով, աւելորդ է ըսել, թէ հայ ժողովուրդին համար ինչ նշանակութիւն ունի ուսուցչիչը, աւելորդ է ըսել՝ ինչ եղած է հայ ուսուցչիչին առաքելութիւնը եւ դերակատարութիւնը հայ ժողովուրդի պատմութեան ընթացքին: Հայոց պատմութիւնը վկայ է:

Արեւմտահայութեան պարտադրուած աշխարհափոխ ճակատագիրին մէջ հայ ուսուցչիչը եղաւ ու կը մնայ կողմնացոյց հայ նոր սերունդներուն:

Այսպէս եղած է միշտ հայ ուսուցչիչին դերը, եւ հայ ժողովուրդը գիտակցած է հայ ուսուցչիչի դերին եւ արժէքին:

Սակայն ուսուցչիչը երբեմն կրնայ անճակատար փորձառութիւն ունենալ ըլլալ, որ երկար վարժարանէ ետք եւ երկար տեսեալ համբերութեան յոգեմած համոզուիլ այն տարածուած սացուածքին, թէ ուսուցչութիւնը ապերախ գործ մըն է:

Այո, ուսուցչութիւնը առաքել-

ութիւն է եւ այդ ալ համամարդկային նպատակ հետապնդող եւ վեհ ու վեհ իտեալներու համար գոհուած առաքելութիւն մըն է, որ միայն կոչումով կրնայ բացատրուիլ: Ի վերջոյ, բոլոր տեսակի համամարդկային արժէքներու համար նուիրուած գործ առաքելութիւնն է: Անտեղի կրնայ չըլլալ այն համոզումը, թէ ուսուցչական ասպարէզը մարդկային, անհատական, նեղ եւ եսակեդրոն կեանքի պրիսմակէն դիտուած համոզում մըն է: Մարդկային, անհատական պրիսմակէն այնքան նեղ փորձը է, որ չի կրնար իր ամբողջութեան մէջ տեսնել ու գնահատել սերունդներ դաստիարակող ուսուցչիչին առաքելութիւնը: Ասոր դիմաց համամարդկային իտեալներու համար նուիրուած առաքելութիւնը է՛ւ աստուածահանոյ է՛ւ հաւաքականութիւններու նման մէջ անգրգնահատելի է:

Ուսուցչութեան ասպարէզին իսկական եւ հարազատ ըմբռնումին համաձայն մենք կը դիտենք ձեզ եւ ըստ այնմ կը գնահատենք ձեր անձնուպէր ծառայութիւնը ուսուցչական ասպարէզէն: Անգամ մը եւս կը շնորհաւորենք ձեզ եւ կը մաղթենք ձեզի կատարելաբար առողջութիւն եւ ուսուցչական ասպարէզի անսասան առաքելութիւն՝ յօգուտ մեր ժողովուրդի գոյատեւման:

Աղօթարար  
ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

# ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻՉԸ ՏԵՐՆ Է ԻՐ ԿԱՄՔԻՆ

Լիբանանի կրթական համակարգը ի պատուի է այսօր: Դպրոցները փակ են, օրը՝ տօնական: Նախօրեակին, իւրաքանչիւր աշակերտ փունջ մը ծաղիկով կամ սրտագին մէկ վարդով յայտնեց իր սէրն ու երախտագիտութիւնը հանդէպ իր «երկրորդ ծնող»ին, որուն տրուած է դաստիարակ, ուսուցիչ կամ մանկավարժ անունը: Հին օրերու վարժապետ մակդիրով ընդունուած էր հայ ուսուցչիչը, որ կ'արժանանար ամբողջ ժողովուրդին յարգանքին եւ գոբարուրանքին:

9 Մարտ. օրացոյցը կը մատնանշէ թուականը ու մոռնալ գայն կամ անտարբեր մնալ այս թուականին դիմաց, ներելի չէ: Մեր գաւազները հազիւ թոթովի սորված, կը յանձնենք դաստիարակ-մանկավարժին, ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ: Դժբախտ է այն հայ մանուկը կամ պատանին, որ զրկուած է հայ դպրոցէն, հայ ուսուցչիչին շունչին ջերմութենէն:

Հայ դպրոցը երկրորդ ընտանիքն է հայ մանուկին: Ոչ ոք կրնայ հակառակը փաստել, իսկ անոնք, որոնք կ'ուզեն արուեստական տրամադրութեամբ նսեմացընել հայ ուսուցչիչին դերն ու նուիրումը, կը մեղանշեն:

Հայոց լեզուին, գիտութեան, հայուն պատմութեան, անցեալին հետ կապ ստեղծող, հայ աշակերտը իր արժանիքներու կապող հայ մարտն է հայ ուսուցչիչը, որուն նկատմամբ վերջին երեք-չորս տարիներուն, մեր կամքէն անկախ, դժբախտաբար շունչնայնք արժանի վերաբերում: Հայ ուսուցչիչը լուս տառապեցաւ մեր երկրին մէջ ստեղծուած տնտեսական տագնապին պատճառով, բայց ան մնաց պատնէշի վրայ, անտըտունջ, դաստիարակութեան ոչ մէկ արտայայտութիւն ունեցաւ, բոլորքի ցոյց չկատարեց, ակոսները սեղմած սպասեց օրերու բարելաման ու դեռ կը սպասէ յոյսով, որովհետեւ եթէ հայ աշակերտին զլանար տալու իր միտքն ու հոգին բարիքները, յայնժամ պիտի փուլ գար ազգային մեր ինքնութեան պատուար ՀԱՅ ԴՊՐՈՑԻ Կառոյցը:

Եթէ չըլլար հայ ուսուցչիչը: Այս հարցականը պատասխանի չի կարօտիր, որովհետեւ յստակ է, պարզ ու իմանալի: Ենթահիւ լիբանանահայ գաղութի ազգային գիտակցութեան, հայ վարժարանները եղան ոչ միայն մեր գաղութին արեւմտաբար երակը, այլեւ ան եղաւ աղբիւրը սփիւռքահայ օճախներուն շնչառու-

թիւնը գորացնող: Լիբանան արտասահմանեան գաղութներուն տրամադրեց իր հալածիտական կեդրոններուն մէջ կազմաւորուած ուսուցչիչներ: Ու իրեն մշակոյթի զարգացման մատակարար՝ մեծ եղաւ դեր մեր գաղութին, որ այսօր իր ձայնը լսելի կը դարձընէ ըրտրին, որպէսզի օգնութեան ձեռք երկարեն «լուսի աղբիւրին»: Լիբանանահայ գաղութին հեռացողներ լաւ գիտեն արժէքը այս գաղութին ու հիմարենց որդեգրած գաղութներուն մէջ կը յիշեն անկասկած օրերը անցեալին, երբ հայ վարժարաններու կանաչներուն մէջ՝ հաղորդուելու համար Մեսրոպի գիւտին: Ու այսօր, երբ տասնեակ մը հայ վարժարաններու փակումը կը տեսնենք, դարձեալ չենք վհատիր, որովհետեւ մեր ունեցած մնացեալով եւս պիտի կարենանք «Տիրել ու գերել գերթով ու ձիրքով»...

«Ուսուցչաց Օր»-ուան առիթով հարկ է յիշեցնել անգամ մը եւս մեր պարտքն ու պարտաւորութիւնը հանդէպ Հայ Ուսուցչիչին, որովհետեւ առանց Հայ Դպրոցին ոչինչ կ'արժենք: Իսկ եթէ կորսնցնենք մեր ինքնութիւնը, մեր ուրոյն դիմագիծը, ձեռքէ կը հանենք սթանչելի սերունդ մը, որ կարօտը ունի ինքնաճանաչման, իր պատմութեան արժանիքներուն մէջ խորանալու, հայրենիք հասկացողութիւնը արժեւորելու: Պէտք է յստակ ըլլալ բոլորին, թէ հայապահպանումը գիտութեան նոր հնարքներուն հետեւելու արշալի նշանակել եւ անով չի սահմանուիր: Հայապահպանումը կ'արձարանայ միայն հայ դպրոցին ապրող գոյութեամբ: Հետեւաբար եկէք պահ մը մտածենք ու խոկանք՝ «Ուսուցչաց Օր»-ուան առիթով, թէ ո՞ր է ինչը եւ ո՞ր պիտի հասնինք անտարբերութեամբ: Մեր գաղութը իր ձայնը կը բարձրացնէ այսօր մեր յոյսով՝ «խուլ ձեռնարկներուն», թէ չկայ փրկութիւն ազգի՝ առանց հայ դպրոցի, առանց հայ մշակոյթի, առանց հայոց լեզուի պահպանման, ու այս ամէնուն գիտուողները պաշտպան հայ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻՉԻՆ:

Ներկայի բոլոր տեսակի դժուարութիւններուն տուկացող հայ ուսուցչիչին կը մաղթենք առաւել կամք, որովհետեւ իմաստունը ըսած է.

«Ուր կամք, հոն՝ ճանապարհ»:

ՀԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# ՈՒՍՈՒՑԻՉԻՉԻՉ... ՊԱՏՈՒԱԿՈՐ ՈՒ ՊԱՐՏԱԿՈՐ ԵՅՆՈՂ ԿՈՉՈՒՄ

Բոլոր, բոլոր մանուկներուն...

Բոլոր անոնց, որոնք կը սիրեն երկինք ու արեւ, հող ու հեքիաթ: Բոլոր անոնց, որոնք կը սիրեն նկարել: Ահա անոնց է, որ կը սպասեն դպրոցն ու անհամբեր ուսուցչիչները: Ուր կը սպասուին հետաքրքրական հանդիպումներ գեղեցկութեան, մաքուր-

թեան, անկեղծութեան, բարի երազներու հետ, որովհետեւ անոնց միտքն ու թափիկները կը հանդիսանան գեղեցկիւր յայտնաբերելու կախարական բանալին:

ՈՒՍՈՒՑԻՉԻՉ... պատուար ու պարտաւորութեան ձեռքով, շրջապատուած երեխաներով: Մեր ազգը մեր ուսուցչիչներու շնորհիւ մեծ-

ցած է: Այո՛... Անհաղբիւր մը, որ ընկեցաւ ու յորդորեցաւ հայոց մեծ ուսուցչապետ ու լուսաւորիչ Մեսրոպ Մաշտոցի հայրենի գիրքերուն ստեղծումէն անմիջապէս ետք. բացուեցան հայկական առաջին դպրոցները եւ ինք եղաւ առաջին ուսուցիչը:

Հետագայ տարիներուն, հայ ժողովուրդի ուսուցիչներուն մէջ քիչ չէին նշանակող գիտնականներն ու մտածողները: Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Եսայի Նշեցի, Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի եւ շատ ուրիշներ: Անոնք պատրաստեցին դասագիրքեր, հիմնեցին դպրոցներ ու համալսարաններ (Տաթև, Գլաճոր, Սանահին): Ան զ ն ա հ ա տ ե լ ի նպաստ բերած է մեծ լուսաւորիչ նաչատուր Արովեան: Յայտնի ուսուցիչներ Պերճ Պոստեան, Ղազարոս Աղայեան եւ նաեւ այլ շատ գրողներ:

Որքան ալ ուսուցման միջոցներն ու արդիական ձեւերը բազմապատուկին, այնուամենայնիւ դար կը մնայ անփոխարինելի միջոց սերունդներ դաստիարակելու համար:

Ուսուցիչի քաղցրահնչիւն եւ իմաստուն խօսքը իր մեծագոյն յատկանիշն է՝ համբերութեամբ կը զարգացնէ մանուկին ուղեղը:

Տարիներ կ'անցնին, կը թռչին ոսկեթեւ թիթեռնիկներու նման, մանուկներու յուշերուն մէջ վառ կը մնան դպրոցական տարիներն ու իրենց սիրելի ուսուցիչները բարի ու համեստ, իսկ իրենք կը գառնան ապագայ ուսուցիչներ, անոնք կը մտնեն դասարան եւ կը շարունակեն իրենց ուսուցիչներուն սկսած ազնիւ գործը:

Երեք ամիս առաջ, «Ազդակ»ի երկրորդ էջին վերեւ, աչքառու եւ սեւ գիրերով, իրերայնորդ երեք անգամ գրուած «Մահազ»ին տակ, տիկին Եոլանու Աճէմեանին անունը կարդացի յանկարծակի ցնցումով եւ ցաւով. մինչ կը պատրաստուէի այցելել իրեն, իր դստեր՝ Սիլվիային հետ ճշդուած ժամադրութեամբ մը, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն Նուզկաման 1700 ամեակի ուխտագնացութեանս տպաւորութիւնները հաղորդելու համար:

Տիրութեան զգացումը աշխուժացուց յիշողութիւնս, որ այնքան պայծառ եւ կայծակնային արագութեամբ բացաւ առջեւ 30 տարիներէ աւելի Նշան փառանճեան ձեւարանի աւարտական դասարաններու Ֆրանսերէն գրականութեան դասապահը:

Չանգը գարնուեցաւ. Ֆրանսերէնի գիրքերը մեր սեղաններուն վրայ՝ մեծ լընութեամբ կը սպասէինք «Մատամ»ը: Մենք բոլորս յարգանքով տիկին Եոլանու կ'անուանէինք այդ մակդիրով՝ զինք ընդունելու համար: Արդեօք ի՞նչպէս պիտի տեսնէինք զինք այսօր, ի՞նչ նորութեամբ: Ան միշտ վայելուչ եւ ուշագրաւ էր. յաճախ կողմնակի ամփոփուած նախտուն ու խտտուած վզկապով մը, որմէ կ'արտացոլար դասական ծածու ու նորարարութեամբ զրոյթուած իւրապատուկ եւ ինքնատիպ ճաշակ մը, իսկ դէմքին ու աչքերուն ժողովուրդին քաղցր ու խիստ արտայայտութիւնը եւ հնչուելու գուսպ ձայնը կ'ամբողջացնէին անոր լուրջ եւ հմայիչ տիպարը:

Ենթահիւ իր աշխուժ եւ կենսունակ նկարագիրին, Ֆրանսական գրականութեան լաւ տիրապետելուն, գրական ու մշակութային անցողիկութեան տեղեակ ըլլալուն եւ սորվեցնելու իր մեծ փափաքին, դասապահը կը մնար հետաքրքրական եւ նոյն ուժականութեամբ սկիզբէն մինչեւ վերջ:

10րդ եւ 11րդ դասարաններուն մէջ, աւելի քան 30 տարի «Մատամ»ը ծանօթացուց եւ մեկնաբանեց Ֆրանսական գրականութեան տիտանները. կարդացինք, վերլուծեցինք եւ արժեւորեցինք Մոլիէրի, Բոնինի, Վոլթէրի, Ռասինի, Պոտլէրի, Հիւկոյի, Պալպաքի, Եթաօրիանի, Լամարթինի եւ շատ մը ուրիշ հեղինակներու գործերը եւ անոնց ընդմէջէն հաղորդուեցանք Ֆրանսական մշակոյթը հարստացնող գրական ու մտաւորական դէմքերուն, անոնց գաղափարներուն, զգացական եւ իմացական աշխարհին:

Թեւեւ այն սեւ պայուսակէն դուրս հանելով նշանաւոր այն տետրակը, որուն էջերուն վրայ խնամքով ամփոփած կ'ըլլար նոր գաղափարներ, այժմէական տեղեկութիւններ ու ժամանակակից քննադատութիւններ, արագ-արագ կը դարձնէր գանոնք, ժամանակին մէջ ոստումներ կատարելով կապեր գտնելու եւ բաղդատութիւններ ընելու մտքերու եւ ոճերու միջեւ: Ան իր նիւթը կը ներկայացնէր ինքնավարտաճ, բծախնդրօրէն, աշակերտներուն հետ խստապահանջութեամբ վարուելով:

Ֆրանսական մշակոյթին արժէքները աշակերտին համար շնորհիւ անցեալին պատկանող անմատչելի եւ անհասկնալի երկեր եւ նիւթեր, ինչպէս ցուցաբերող կին ետին ազամանդէ գարդ, այլ՝ նրբաճաշակ այս ուսուցչուհիին մղումով, կը պատահէր որ դասապահը տարածուէր դասարանին ու դպրոցին նեղ շրջափակին անդին եւ աշակերտները զբոսնակ գիտելիքէ դուրս գալով՝ փոխադրուէին թատրոններու,

ցուցահանդէսներու եւ դասախօսութիւններու օգտակար աշխարհը:

Այդպէս դէմ յանդիման գտնուելով մշակութային ու բարոյական արժէքները մարմնաւորող ձեռնարկներուն հետ, մենք զգացինք անոնց ներգործութիւնը մեր մտածելակերպին, ապրելակերպին եւ վերաբերմունքին վրայ:

Այդ համամարդկային արժէքները կազմեցին ձեւարանի հայ աշակերտին դաստիարակութեան եւ ուսման հիմնական առանցքներէն կարեւորագոյնը, որուն միջոցով անոր մէջ զարգացան անվիճելի եւ անգիշելի սկզբունքներ. լուրջ դատողութիւն, հաստատ կեցուածք, ինքնուրոյն կարծիքներ, դուռնալու համար մտային ու հոգեկան ու անկաշկանդ թռիչքով բայց պատասխանատուութեան գիտակցութեամբ մարդ:

«Մատամ»ը լոկ դասատու մը չէր, այլ դաստիարակի մը մտահոգութիւններով յանձնառու ուսուցչուհի մըն էր՝ հետամուտ հայ աշակերտին վարք ու բարքով: Բոլորս լաւ կը յիշենք, որ երբ ամառը իւր աւարտական մեր հանդէսին բեմ պիտի բարձրանայինք, վկայականաց բաշխման ատեն, մեր դասընկերուհիներէն մէկը ներկայացաւ սովորականէն կարճ սպիտակ հագուստով: Յանկարծ մեր ականջին հնչեց «Մատամ»ին ջիւղ ու վճռական ձայնը. «Անմիջապէս ստուն կ'երթաս ու հաղուսող կ'երկարես, թէ ոչ վկայական ստանալու համար բեմ չես բարձրանալ»:

«Մատամ»ը այն մշակն էր, որ տարիներ շարունակ մեծ նուիրումով, անսակարկ ոգիով ու երիտասարդ շունչով վարուեցաւ հայ դպրոցականին հետ, յղկեց, կոփեց, մարգեց ու մշակեց անոր միտքը, հոգին եւ նկարագիրը եւ բարձրորակ ճաշակ ու սէր ներշնչեց բարիին, ազնիւին ու գեղեցիկին հանդէպ: Իրազեց մօտեցումով ան իր լաւագոյնը մատուցեց ի ինչդիր մշակոյթին ու գրական նուրբ միտքին զարգացման:

Արագութեան այս դպրուն, երբ մարդուս յիշողութիւնը կը փոխարինուէր համակարգիչով, ու երբ մեքենայանացումը մարդը ի սպառ կը դատարկէ զգացումներէ եւ ապրումներէ, միշտ պիտի գտնուին աշակերտներ, հետեւողներ, որոնք պիտի վկայակոչեն յիշատակը երկար տարիներու իրենց ուսուցիչներուն, եւ կրթական մշակներուն եւ երախտագիտութեան ու յարգանքի խօսք պիտի ուղղեն անոնց՝ գնահատելի իրենց գործունէութեան համար:

Ենթահիւ այդ ուսուցիչներու խոր գիտակցութեան, անհատուած կենսունակութեան եւ խոնարհ հոգիին, անոնց յաւիտական պիտի ունան անշէջ ապրում, սերունդներու յիշողութեան մէջ եւ պիտի դառնան օրինակ, որպէսզի մարդիկ, մշակոյթով լուսաւորուած եւ քաղաքակրթութեամբ դաստիարակուած ու ազնուացած, զիրար լաւ ճանչնան ու գնահատեն եւ իրարու աւելի մերձեան մշակոյթի ու քաղաքակրթութեան ճամբով:

Ուսուցչաց Օրուան առիթով թող այս գրութիւնը ընդունի իր փունջ մը ծաղիկ, նուիրուած՝ աշակերտի մը կողմէ իր մտաւորական մշակներուն:

ԱՐՓԻ ՄԱՆԿԱՍՍՐԵԱՆ

ONE SECOND IS ENOUGH...  
Արագը Կը Պատահէ Երկարութեան Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.  
...ԻՍԿ ՄԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՐ ԱՄԵՆ ԵՐԿԱՐԿԱՆ.

ԱՏՀԻԼ AFHIL

ԱՅՏԻՆԻ ԸՆԴ, Բ. Յարկ, Գեո. Ե. Յարկ. (01) 262231-242556-242557  
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

Բ.Բ.Բ. Բ.Բ.Բ.

Վ. ՓՎՓԱԶԵԱՆ  
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ  
Կը Երկայացնէ՝  
ՀՏՈՒԱՐՏՕ ՏԸ ՃԻԼԻՓՓՈՒ  
«ԵՐԵՒԱՆԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԵՐԵՒԱՆԵՐ»  
ԲԵՍԱԳՐՈՒԹԵԱՍԲ՝  
Ը. Արուեստի վաստակաւոր գործիչ,  
Պետական մրցանակի դափնեկիր՝  
ՓՐՈՑ. ԵՐՈՒԱՆԻ ԴԱԶԱՆԾԵԱՆԻ  
Տեղի կ'ունենայ 1,2,3,7,8 (Կալա),  
9, 10 Մարտ 2002, Երեկոյեան ժամը  
ձիւղ 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան»  
թատերասրահին մէջ:

ՌՈՒԶԱՆԱՆ  
ՈՒԼԻԿԵԱՆ

# Գրական Էջ

## ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵԼԻՆ

«Ամեն մի հայ երկու անուն պետք է լաւ յիշի. մէկը՝ Մեսրոպ Մաշտոցի անունը, մէկն էլ այն ուսուցչի, որ առաջին անգամ մեսրոպեան տառը սովորեցրել է իրեն: «Ա» տառը ումից որ սովորել ենք, նրան երախտապարտ պիտի մնանք մինչեւ մեր կեանքի վերջը»:

հրԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

**Մ**աշտոցեան ուխտի մեծանուն ու մեծապատակ այս գլխագիր մեծին՝ Հրաչեայ Աճառեանի հուատարին բանաբով եւ հուատարմութեան բոցով գիր ու խորհուրդ ստացած վերի պատգամը, իր տարբեր հնչեղութեամբ եւ անմիջական շեշտով, այսօր անգամ՝ մը եւս մեզ կը դնէ մեր բարոյական մայր պարտաւորութիւններէն մէկուն դիմաց, երբ «Ուսուցչաց Օր»ուան առիթով կ'ուզենք հրապարակա խունկ ծխել «Ա» տառը առաջին անգամ մեզի սորվեցուցած մեր ուսուցչուհիներուն եւ այն բոլոր ուսուցիչներուն հաշուոյն, որոնք իրերայաջորդ սերունդներու դիմագիծը բիւրեղացուցին եւ անոնց հողեղէն անօթին Մաշտոցի անմեռ շունչը փչեցին: Մէկէ աւելի առումով անբարեկամաստ մեր այս օրերուն, երբ Հայ Դպրոցն ու Հայ Ուսուցիչը կ'ապրին խոր ցնցումներ, երբ մերօրեայ տնտեսական եւ այլ տագնապներ շարունակ մարտահրաւեր կը կարդան ժամանակի հոսանքն ի վեր թիավարելու հրաւիրուած հայ դպրոցին ու անոր արթուն պահակներուն, մեր պատմական դարաւոր փորձառութիւնը առաւել քան գամեման կը շեշտէ անփոխարինելի արժեքը հայ ուսուցիչին՝ Լիբանանէն մինչեւ Աւստրալիա եւ հեռաւոր Ամերիկաներէն մինչեւ Հայաստան ու Արցախ հայաշխարհ:

Հայ ուսուցիչի ամբողջական կերպարը կը ստանայ անբերի դիմագիծ ու եռութիւն՝ Մաշտոցեան մինչեւ մեր օրերու հայ հոգիի անձնուրաց ծառաներ: Եւ ուսուցիչին գուգահեռ՝ կ'ուրազծուի կեանքի ժապաւենը հայ դպրոցին, որուն երբը երբեք չէ եղած հեգնասահ, միշտ բաւած է ժամանակի խորշակներուն, յարթահարած ծայր աստիճան դժուարին պայմաններ ու Հայաստան աշխարհը դժոխքի վերածած խառն կացութիւններու մէջ անգամ ստեղծած է գիր ու մշակոյթ, կարարկրթութիւն ու գիտութիւն եւ ասպարէզ կարողացած ժամանակի լուսաճառագայթ փարոսներուն:

Այսպէս սնուարկած է հայ դպրոցը, ճեղքելով ամէնէն սարսփելի փոթորիկները եւ յարթական հասած է միշտ մշակոյթի ու քաղաքակրթութեան պայծառագոյն փարոսներուն, որովհետեւ ղեկին ետին գտնուած են Անանիա Շիրակացիի եւ Մխիթար Գօշի, Յովհան Որոտնեցիի եւ Խրիմեան Հայրիկի, Խաչատուր Աբովեանի եւ Րաֆֆիի, Թլկատիցիի եւ Ռեալեոս Պերպերեանի, Ռուբեն Ջարդարեանի եւ Յակոբ Օշակեանի, Դանիէլ Վարուժանի եւ Եղիշէ Ջարեանի, Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի, Մուշեղ Իշխանի եւ Վահէ-Վահեանի նման անձնամոռ բազում նուիրեալներ, որոնք հայ մանուկին ու պատանիին գանկին մէջ գիտելիք ու ծանօթութիւն ամբարելէ առաջ եւ վերջ, իրերայաջորդ սերունդներուն նկարագիրն ու ոգին դարբնած են, անոնց ներշնչած են հուատք եւ անհունները նուաճելու սաւառնաթել վճռակամութիւն, պայծառատես գորութիւն եւ ազգային հպարտութիւն, ցեղային լուր գիտակցութիւն եւ պողպատեայ յանձնառութիւն:

Նաւարկած է եւ յարթանակած միշտ, նոյնիսկ օտար միջավայրերու մէջ, որովհետեւ Մուրատ

Ռաֆայելեան վարժարանի մը ցուրտ պատերը կենդանացած են Ալիշաններու եւ Ջամէտներու հայակերտ շունչով, Լազարեան նեմարանը իրաւա մը եղած է ոգեշնչող փոքրիկ Հայաստան, եղած են լուսակերպար Հայաստաններ ու պետութիւն, երբ մենք եղած ենք պետականութենէ գուրկ ու զանգաւն բարբառներով գիրար խաչածնող բազմութիւն: Եւ Հայ Դպրոցը եղած է ոգեղէն հայրենիք ու պետութիւն, որովհետեւ անոր ցուրտ ու օտար պատերն անգամ շնչաւորուած են ցեղին բարխուր երակից կենսապարգեւ հարրատութիւններով, մեր ազգային ինքնուրոյն էութեամբ, հայկեան անպարտելի տոկունութեամբ, մաշտոցեան լուսապաշտ խիզախութեամբ, օտարին անսուտ հարստութիւնները ազգայնացնող մեր թարգմանիչներուն անուրանալի պայծառատեսութեամբ, որոնց ցանած սերմերէն նորանոր կաղնիներ բարձրացած են պարթեւահասակ եւ ալ աւելի խտացուցած շարքերը վաղուան ախոյեաններուն:

Ապացոյց: Մէկէ աւելի քաղաքակիրթ ազգերու պատիւ ու հպարտութիւն ներշնչող մեր վանքերը, միջնադարեան մուշտ ժամանակները լոյսով ու յաւերժութեան զանգածորով նոյնպէս մշակոյթի վառ օճախները՝ Նարեկայ վանքէն մինչեւ Հաղբատ ու Գլածոր եւ Տաթևի համալրասարանէն մինչեւ Կիլիկեան լուսատուներ:

Ու այս բոլորը յաշտուած են դառնալ ոգեշնչող իրականութիւն, որովհետեւ գտնուած է անփոխարինելի՝ Ուսուցիչը, մեծագոյն հրաշագործը, առանց որուն մեր պատմութեան ամէնէն նուիրական հրաշքները նոյնիսկ պիտի ըլլային թերի եւ է՛ն անհունատալի յարթանակներն անգամ խոցելի:

Այդպէս էր տակաւին մօտիկ անցեալին: Հակառակ անկասկած պայմաններուն, «կամենալը կարենալ է» համոզումը միշտ շօշափելի եւ արդիւնբեր իրականութիւն կը դառնար, որովհետեւ սուսական դաստուարին փոխարէն մենք մեր շուրջ աւելի եւ աւելի՝ շատ կը հանդիպէինք հայ ուսուցիչի այն եձԱԿԻ ՏԻՊԱՐԻՆ, որուն ներքին եռութիւնը կը բարխէր Մաշտոցի պատմակերտ տեսլապաշտութեամբ, Վարդանի կարմիր հուատարմութեամբ, Յովհան Որոտնեցիի անկրկնելի լուսապաշտութեամբ, Ալիշանի բացառիկ հեգուրթեամբ, Նալբանդեանի եզակի ազատապաշտութեամբ, Խրիմեան Հայրիկի երկաթեայ անպարտելիութեամբ, Վարուժանի հեթանոսաշեշտ հայապաշտութեամբ, Օշակեանի անվիճելի իրաւութեամբ, Շանթի իմացական ամբարանները, Աղբալեանի համբուրելի բանաստեղծականութեամբ եւ յիշուած ու չյիշուած հարիւրաւոր բացառիկ ծնունդներուն եւ հայ հոգիի ու մտքի անանուն մշակներուն այն տարօրէն բացառիկ բազում յատկանիշներով, որոնք ալ աւելի ամբողջացուցին հայ ուսուցիչի ամբողջական կերպարը, յաւերժացուցին ամենայն իրաւութեամբ եւ կոանցին անոր բարձրագոյն պատուանդանը՝ իբրեւ հայ հոգիի ու մտքի անփոխարինելի դարբին ու պատարագիչ:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԼԵՒՈՆ ՇԱՆԹ ԴԱՍՏԻԱՐԱԿ

Շանթ նոյն ատեն տարուեստագէտ եւ տաղանդաւոր ուսուցիչ էր, օժտուած նիւթ մը կենդանացնելու, գրաւիչ եւ հետաքրքրական դարձնելու կարողութեամբ: Ընթացիկ տեղեկութիւններուն մէջ անգամ վարժ էր բարխուր կեանք եւ սրտազրաւ ջերմութիւն դնելու: Գիտէր անցեալը ոգեկոչել վառ գոյներով և վերացական գաղափարներով գունաւորել: Այս պատճառով՝ ինչ որ աւանդէր - պատմութիւն, աշխարհագրութիւն, հոգեբանութիւն, մանկավարժութիւն - կը դարձնէր հիւսիսեղ եւ տպաւորիչ:



Մտնողը: Քալուածքին, շարժումներուն եւ աչքերուն արտայայտութեան թարմութիւնը մոռցնելու մտային անոր մագեթիկ տակ թեւեւ կամ գիրք՝ արագ քայլերով կ'առաւարտ մինչեւ դասարանին մէջտեղի դրասեղանները, կը խոնարհէր աշակերտներուն առջեւ, պայծառ ու բարի նայածք մը կը նետէր բոլորին վրայ եւ յետոյ, անմիջապէս, կը հնչէր իր ուժեղ, մետաղային ձայնը.

- Տղաքս...

Ո՛չ տատանում, ո՛չ յառաջաբան: Ո՛չ իսկ յիշողութեան նուազագոյն սկզբագումով մը՝ նիւթի փնտտումը: Դասը սկսած կ'ըլլար արդէն ու ժամը կը սահէր անզգաւարներ անգամ գինջը մտիկ կ'ընէին: Ամբողջ պահուան ընթացքին Շանթ ռոտի էր ընդհանրապէս:

Դասարանին ազատ մնացած մասը իր բեմէն էր, լայնքին ու երկայնքին, ուր Շանթ դասը կը բեմադրէր, պիտի ըսէի՝ կը «խաղար» վարպետ ու հօգօր դերասանի մը տիծերունի» մըն է ներս

գինջը անպայման կ'իյնային իր տիրապետութեան տակ:

Երբեմն դասարանին անկիւնն էր, յանկարծ դարձեալ կեղրոնը. երբեմն ամպիոնին վրայ, յաճախ գրատախտակին դէմ, գրասեղաններու շարքին մէջ, դրան քով կամ աթոռին յենած:

Եւ այս յարափոփոխ շարժունակութիւնը այնպիսի՝ շնորհով եւ խօսքի ալիքին հետ համընթաց այնպիսի՝ ներդաշնակութեամբ, որ ոչ ոք կ'անդրադառնար մանկավարժներասանի խաղին, այլ միայն ապրում է պատկերաւոր իմացութեանց քանդակներ կը տեսնէր իր դիմացը:

Ոչ մէկ թափփածոութիւն: Ամէն ինչ նախատեսուած, նախաձրագործուած: Անսայթաք էր լեկերտներուն առջեւ, հագուածքն ու կեցուածքը: Գիտէր թէ ուրկէ՞ պիտի քակէր նիւթին կծիկը, ի՞նչպէս պիտի առաջանար եւ ո՛ւր պիտի վերջանէր:

Չանգը կը հնչէր: Արդէն: Որքա՛ն շուտ կը թռէր դասապահը: Ինչպէս որ մուտք գործած էր, նոյն ձեւով ալ Շանթ կը մեկնէր, մինչեւ մէջքը խոնարհելէ ետք դասարանին առջեւ:

Ինք կ'երթար, բայց տղաքը լուռ կը մնային տակաւին իրենց տեղը: Հագուածքի՛ւտ երեւոյթ: Շանթի արծարծած խնդիրներուն արձագանք կը շարունակէր թրթռալ բոլորի հոգիներուն մէջ:

Այս չէ՞ միթէ մանկավարժութեան մեծագոյն յարթանակը:

Ս. ԻՇԽԱՆ

## ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մեր շրջանին, դրականութեամբ խանդավառ տղայ մը կար: Գրական փորձեր կ'ընէր եւ կը վարէր աշակերտական թերթին խմբագրութիւնը: Ամառուան արձակուրդին պատահեցաւ որ կարգայ Օշականի կողմէ արգիւլեւած գիրքերէն մէկը՝ նոյնինքն Օշականի «Մակ պտուկը»: Գիրքը կարգաւէ ետք շնորհակալ մնացողան: Յուսահատութիւն մը պատեց գինջը: Ընկճուած էր վէպին ահարկու շքեղութեան տակ: Ամացնող գեղեցկութիւն մը կը վերագրէր անոր: Ոճին, թիփերուն իրաւութեան, հոգեվիճակներուն հեղեղային թաւալումին մէջ, պոսիկ կը տեսնէր ինքզինքը: Ու երկարացուց թէ ինքը ո՛չ թէ գրելու, այլ հագիւ կարգալու արժանի մէկն է: Ու գիրքը աւարտած օրը, նաք յոյն որոշեց միշտ հրաժարել գրողի ունայնամտութիւն մը հետապնդելէ:



Օշական մտիկ ըրաւ եւ յետոյ խօսեցաւ. - Մտիկ ըրէ տղայ, կան մեծ լեռներ եւ կան պոսիկ լեռներ: Մեծ լեռներ մէջ ենթադրէ որ կայ մեծ քանակութեամբ ուսի, պոսիկ լեռներ մէջ՝ քանակութեամբ մեծ: Արդ՝ մեծ լեռան շատը կրնա՞յ պատճառ ըլլալ որ պոսիկին քիչը դարձնէ իր ոսկեղէն արժէքը: Տո՛ւր առաջ մը քիչ քիչ ոսկիդ, շատին մասին մտածելու դեռ ժամանակ չես: Մի մոռնար ըսածս ու գնա՛: Ամէն օր նոր յիմարութիւն մը ընելով ժամանակդ մի անցընէր:

Սոքա՛ն արագ պատահեցաւ վանքի ամարանոցին մէջ, Պարոն Տէր անուրով տեղ մը: Օշական երուսաղէմ կը գտնուէր: Ընկուր հասաւ իրեն: Կանչեց տղան: Այս վերջինը պատմեց իր տպաւորութիւնները եւ հողորդեց երկարացուցութիւնը:

զրկեց Օշականին: Այսպէս էր միշտ: Մտածումով մը, պատկերով մը, դրուագով մը կը փարատէր տղան մտքին մշուշը ու կը լեցնէր զայն նոր խանդավառութեամբ, միշտ ըսելով, ըսել ուզելով քալէ՛, հաստա՛ դուն քեզի, պեղէ՛ հոգիդ ու անպայման կը գտնես ոսկին:

Ուսուցիչներուն մէջ ամէնէն աւելի ինքն էր տղաքը բրտնեցնողը, ամէնէն խստապահանջը, անողո՞քը՝ բայց բոլորէն աւելի կը սիրուէր ինք, բոլոր տղոց կողմէ: Ներքին կարօտներ ստեղծող ու կարօտներու գոհացում տուող նորութիւն մըն էր ինք, որ երբեք չէր հինար: Կարելի չէր միօրինակութիւն մը տեսնել մէջը, ձանձրոյթ մը գգալ իրմէ: Որովհետեւ մշտա՛հոս աղբերը մը չէր միայն, այլ մշանորոգ աղբերը մը, այլ նաեւ բազմաթիւ աղբերներու միաձոյլ հոսանք մը: Գրական նորութեանները, գեղարուեստական վարդապետութիւնները, իմաստասիրական շարժումները, գիտական, բժշկական բոլոր գրուածքներ, տղան՝ անմիջապէս գտաւ ինքզինքը: Մեկնեցաւ խանդավառութեամբ ու երկու օր ետք շարադրութեան նոր տետրակ մը լեցուցած

Պ. ՄՆԱՊԵԱՆ  
Շաբաթ էջ 8

## ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Դաստիարակն է: - Կը խօսի ծանր, յստակ, Ձայնն աստղերէն, լոյսէն կու գայ, Բառը կ'ելլէ, թռիչքներուն վրայ հուր կայ, Ձայն կ'արձակեն իրենց բոյներէն գիրքն ու կեանք:

Թոք կը սպառէ, սիտը կը լըկէ, շունչ կու տայ, Եւ չի խորհիր իր վերքերուն. Մանկութեան դէմ դրած ամբողջ ձեռնարկն՝ Կը բաժնէ իր ծոփը բազում լըճի վրայ...

Վըսէ՛մ կոչում: Հոգեակներու մէջ հըլու, Ըզգուշաւոր հըպոմներով՝ Կը գրէ գոթն էջերու վրայ ապահով. Կը ցանէ սերն՝ անձնութիւնն քաղնու:

Անոնց կոկոն ուղեղին մէջ կիսաբաց Կը գետեղէ ճառագայթներ, Եւ կը լեցնէ խաւերն անոր՝ բարեբեր Իր գիտութիւնն Աստուծոյ մէջ՝ ամփոփում:

Եւ հուարած ամանին շուրջն իր սրբոյն Մանկան շրթներ՝ որք կը ծըծեն, Կը բաշխէ, հեզ, անոնց արիւնն արիւնէն.- Այդ իր կեանքն է՝ որ կ'անցընէ ուրիշին:

Եւ այսպէս օր մ'երթոր ըլլայ զո՞ն մը ծեր, Մ'եղնելու մօտ եւ հոգեվարք: Գիտ՝ մընայ լոկ անոր այս մեծ միջոքարանք՝ Թէ՛ իր կեանքն իր սաներուն մէջ կ'ապրի՝ դեռ:

## ԴՊՐՈՅՆ ԱՀԱ...

Դպրո՞ցն անհ հայկական... Մեսրոպակո՞ւ պատճա՞հ՝ Կ'ամբարտապետի դարձրու աճառարձոր դաշտին վրայ, Ու հեղեղին դէմ անոնց՝ կաղնիորէն կո՛ւրծք կու տայ, Կոթողուելու անյողողո՞ղ՝ հողմերուն մէջ յարաշարժ:

Դպրո՞ցն է հոն հայկական... Մեսրոպասի՞ն ապարանք՝ Հազար գանձով ու քարոզով ու գրաճով կը փայլի, Ու կը նայի Գալիթի՞ն՝ յոյճ աչքով անցեալի, Որուն մէջէն կը ծայտնէ երկու Սուրբեր սպիտակ:

Դպրոցն, այնտեղ, Սահակի պարթեւ հասակը ունի, Որ իր ստուերն հայրական դարե՛րն ի վեր կը սփռէ. Եւ ան ունի Մեսրոպի հարուստ ճակատը լուռ, Ծածանջն որուն կը ճախրէ աստղերն ի վեր յաւերժի:

Դպրո՞ցն անհ՝ վէսի պէս, որ ցուպին տակ մաշտոցեան Կը բխէ շուրճ հայ լեզուի՞ գոտ ու ազնի գեղցիկ: Դպրո՞ցն անհ՝ արտի պէս, ուր՝ քիրտին տակ Ուսուցչի՛՝ Հունս խոստումները լոյսի պիտի քիչ քիչ մայրաճան:

Դպրո՞ցն անհ հայկազեան... Մեսրոպակո՞ւն զհնարան՝ Իր բովին մէջ կը ձուլուի սո՛ւրճ ու ասպարճ հայ հոգւոյն, Մինչ կատարին՝ ծագէ ծագ կը ծածանի երեսուն Եւ ուր երփնեան դրօշակ Այրութեան մաշտոցեան:

Խորա՞ն է ան՝ ուր խոհուն խորեմացին կը խնկէ, Պարտէ՛զն՝ ուր սագ ու սրինգ կը գլուխ քուլակեան. Ան երգեհո՞նն է՝ զոր յօ՛ւ կ'ալեկոծէ Վարուժան, Անտա՛նն՝ ուր քա՛ջ կը շաշէ Սիւսմաթթոն մորիկէ:

Դպրո՞ցն անհ մեսրոպեան՝ Աստու մը պէս վեճափառ... Բեռցած ճշխարհ Անցեալի ու ներկայ փառքն Հայ Գիրին, Անգաւստներն իր պարգա՞ծ իբրեւ երամ աստղային, Ծածանջօրէն կ'ընթացայ դարբերու մոթ ծովն ի վար՝

Լուսէ ցոռկը միսն արեւուն մէջ ապագայ...

ԺԱԳ. Ս. ՅԱՎՈՐԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ԱԿՄԱԿ

### ԹՈՒՐԲԸ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԻՆՉ ԸՆԷ...

Վերջերս կրկնուող բնոյթ սկսած են ունենալ մեկ կողմէ ուրացող բուրբին Հայկական Ցեղասպանութիւնը ներկայացնելու երկր, միւս կողմէ՝ անոր հետ երկխոսութիւն ձեռնարկելու տարբեր տեսակի փորձերն ու փորձութիւնները: Մինչ Թուրքիոյ հետ առանց նախապայմանի երկխոսութիւն կատարելու վտանգներուն յանախ կ'անդրադառնանք մեր մամուլով, սակայն գրեթէ ոչինչ կ'ըսուի վերը նշուած առաջին հարցին մասին, որ նախապաշարուած ուրացողին Ցեղասպանութեան իրողութիւնը ներկայացնելու վատնուած երկր է: Ասկիւ ոչ միայն ջուր ձեռնուր նման ապարդիւն վարժութիւն է, այլեւ կրնայ շահագործուիլ թշնամիին կողմէ:

Խօսինք օրինակով: Ըստ «Հայկական Հարց» բրբական կայքին, Պէքիթ Պայէր անունով բուրբ մը ե-նամակ մը յղած է «Ասպարէզ» օրաթերթի նախկին խմբագիր Ժան Գոսպեանին, անոր բացատրելով, թէ Հայկական Ցեղասպանութիւն տեղի չէ ունենցած, Թուրքիա օրին հարկադրուած է տեղահան ընել հայերը, հայերու պահանջները սուտ են եւ այլն, եւ այլն: «Ասպարէզ» խմբագիրէն խնդրած է չմոռնալ, որ «պատմութիւնը երկու կողմ ունի»: Գոսպեան պատասխանած է խիստ ե-նամակով մը, ուր օրինակներ տալով Թուրքիոյ նորագոյն պատմութեան մը ըսած է, թէ «չարդեր կատարել վարքագիծ դարձած է կառավարութեանը, ըլլալ ան Օսմանեան, Քեմալիստ, թէ արեւմտամէտ ժողովրդավար կառավարութիւն մը»: Գոսպեան նշած է նաեւ, որ Ուրֆայի մէջ իր հարազատներէն շատեր գոն գացած են ցեղասպանութեան:

Պէքիթ Պայէր պատասխանած է. «Եթէ տակաւին կը պնդես, որ հաստատմանը ճիշդ են, ապա ինձի ուղարկէ Ուրֆայի մէջ բնակած հարազատներու անուններն ու իրենց գիւղին անունը»: Գոսպեան վերստին ցնցիչ ե-նամակով մը պատասխանած է՝ տալով անուններ եւ յաւելելով տեղեկութիւններ, Ուրֆայի հայերուն ջարդին մասին: Պէքիթ Պայէր չէ բաւարարուած եւ Գոսպեանի ըսածները հաստատող փաստաթուղթեր պահանջած է: Գոսպեան իրրեւ պատասխան գրած է. «Այս տարուան Օգոստոսին Հայէպ (Սուրիա) պիտի այցելեմ: Ինչու ղուր ալ չէք գար հոն եւ միասին կ'այցելեմ Տեր Զօր, Հայէպէն 6 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող շրջան մը, Թուրքիոյ սահմանին մօտ, եւ կը տեսնենք, եթէ հոն փաստեր կրնանք գտնել»:

Պայէր անտեսելով առաջարկը՝ պատասխանած է. «Ինչիւրի է ըսել այս կամ այն բանը պատահեցաւ: Ես ալ նման բաներ կրնամ ըսել առանց փաստեր ներկայացնելու: Ինչպէս կը տեսնեմ, դուն յստակ փաստեր չունիս, հետեւաբար ես բու պնդումներդ նկատի պիտի չառնեմ»:

Պայէր - Գոսպեան բանավեճը այսքանով չ'աւարտիր, որովհետեւ Պայէր փոխանակուած բոլոր ե-նամակները յանկարծ կը տեղադրէ «Հայկական Հարց» կայքին վրայ ([www.armenisorum.gen.tr/english/asparez.html](http://www.armenisorum.gen.tr/english/asparez.html)) Գոսպեանի ե-նամակները նկատելով «հայերու սուտերուն մէկ այլ ցայտուն օրինակը»:

Պայէրի ուղղուած Գոսպեանի պատասխանները աւելի լաւ կերպով գրուած չէին կրնար ըլլալ: Սակայն ուրացողը ճշմարտութեամբ հետաքրքրուած չէ, ան արդէն իր եզրակացութիւնները կատարած է ճշմարտութիւնը լսելէ շատ առաջ:

Ուրացողին համար ոչ Տեր Զօրի գանկերը, ոչ ալ ամբողջ աշխարհի վկայութիւնը բաւարար փաստ կարելի է նկատել:

Հայկական Ցեղասպանութեան փաստագրուած պահանջատեր հայուն, միջազգային հանրային կարծիքին եւ իրենց անցեալը ճանչնալ փափաքող բուրբերուն համար է սուկ: Իսկ ուրացողը ճշմարտութիւնը կ'ընդունի պարտադրաբար միայն:

ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

## ԱՆՑԵԱԼԸ ԱՆՑԱԾ ՉԷ.

### «ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՐԽԻՒՒՆ»Ը ԵՏ ԿԸ ԲԵՐԷ ՀԻՆ ԿԱՅՔԵՐ»

Շուրջ 26 միլիոն գիրք պարունակող Գոնկրէսի գրադարանը, որ կը գտնուի Ուաշինկթընի մէջ, աշխարհի մեծագոյն գրադարանը կը հանդիսանայ: Եթէ անոր պարունակութիւնը երկտրոնային սարքերու վրայ ամբարանելու ըլլար, ապա 26 թերապայթ ծաւալով տեղ պիտի գրաւէր (1 թերապայթ հաւասար է մէկ թրիլիոն պայթի):

Սակայն Գոնկրէսի գրադարանին ծաւալը գերազանցող նոր արխիւ մը վերջերս տեղադրուեցաւ Համացանցին վրայ: Այդ արխիւը նոյնինքն Համացանցի արխիւն է, որ կը պարունակէ 1996էն մինչեւ այսօր Համացանցի վրայ տեղադրուած բոլոր գրութիւնները, նկարները եւ յատուկապէս Ֆայլերը: [www.archive.org](http://www.archive.org) հասցեով կայքին մէջ տեղադրուած այս արխիւը 100 թերապայթ տեղեկութիւն կը պարունակէ եւ ամիսը 10 թերապայթ ծաւալով նոր տեղեկութիւններով կը հարստանայ:


Շ ն ո Ր Հ Ի Ը [www.archive.org](http://www.archive.org) կայքին մէջ տեղադրուած «wayback machine» փնտռուողի գրութեան, կարելի է Համացանցի տուեալ կայքի մը հասցէն արձանագրելով ունենալ բոլոր այն տեղեկութիւնները, որոնք 1996էն ի վեր տեղադրուած են տուեալ կայքին մէջ եւ ապա կայքէն վերցուած են:

Հսկայական կարելիութիւններու դուռ բացող «Համացանցի Արխիւ» կայքը, ըստ արխիւը պատրաստող Պրոնսթըր Բահլի, օրական 10էն 20 հազար այցելուներ կ'ընդունի: «Համացանցի Արխիւ»ի պարունակութիւնները տեղադրուած են 300 Համակարգիչներու մէջ, Սան Ֆրանսիսքօ:

«Համացանցին վրայ 10էն 15 միլիոն մարդոց ձայնը կայ», կ'ըսէ Բահլի, «անոնց գրութիւնները, տեսակէտները, ըսելիքները: Համացանցը ժողովրդային տեղն է: Այնտեղ կարելի է գտնել լաւը, վատը, տղեղը, հետաքրքրականը, անարժէքը եւ պիղծը: Համացանցը թուղթի աւելի դիւրաբեկ է, Համացանցին վրայ ամէն օր նոր օր մըն է. կարելի է ջնջել անցեալը», կ'աւելցնէ ան:

Սակայն շնորհիւ «Համացանցի Արխիւ»ին, կարելի պիտի չըլլայ ջնջել անցեալը: Այս մէկը բաւարարուած ըլլալ է ուսուցիչները, որոնք կանոնաւոր կերպով լրատուական կայքերու նոր լուրերը կը փնտռեն եւ կ'արձանագրեն իրենց մօտ: Ասոնք սովորական փնտռուողի մեթոտներէն շատ աւելի գործնական են նոր լուրեր փնտռելու համար:

Ստորեւ կը ներկայացընենք շարք մը կայքեր, որոնց մասնագիտութիւնն է լրատուութիւնը:




Եթէ պիտի չըլլայ ջնջել անցեալը: Այս մէկը բաւարարուած ըլլալ է ուսուցիչները, որոնք կանոնաւոր կերպով լրատուական կայքերու նոր լուրերը կը փնտռեն եւ կ'արձանագրեն իրենց մօտ: Ասոնք սովորական փնտռուողի մեթոտներէն շատ աւելի գործնական են նոր լուրեր փնտռելու համար:

Սակայն «Համացանցի Արխիւ»ը ունի միայն մէկ թերութիւն: Անոր պարունակութեան կարելի է օգտուիլ տուեալ կայքի մը հասցէն արձանագրելով «wayback machine»-ի մէջ: Փնտռուողի այլ գրութիւններով օժտուած չէ կայքը: Բահլի եւ իր գործակիցները այժմ կ'աշխատին արխիւը «Կուկլը»ի նման փնտռուողի գրութեամբ մը օժտելու համար:

Յ մ ե ն այ ո ղ է պ ս , արխիւը կը մնայ անբեւաւայելի կարելիութիւններ ընձեռող միջոց մը, որ այժմ ձրիօրէն գրուած է Համացանցը օգտագործողներու տրամադրութեան տակ:

## «ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ԱՐԽԻՒՒՆ» ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ




«Համացանցի Արխիւ»ը պատրաստողները վերջերս համացանցին վրայ տեղադրեցին նաեւ «Պատկերասփիւռի Արխիւ» անունով համացանցի կայքը, որ հետագային պատկերասփիւռներու կայաններու սփռումները պիտի արձանագրէ համացանցը օգտագործողներուն: Անայժմ [www.televisionarchive.com](http://www.televisionarchive.com) հասցեով այս կայքին մէջ տեղադրուած են գլխաւորաբար Սեպտեմբեր 11-ի ահաբեկչական գործողութեան մասին աշխարհի տարածքին պատկերասփիւռի կայաններուն անմիջական տեղեկատուութիւնները:

«Համացանցի Արխիւ»ը պատրաստողները վերջերս համացանցին վրայ տեղադրեցին նաեւ «Պատկերասփիւռի Արխիւ» անունով համացանցի կայքը, որ հետագային պատկերասփիւռներու կայաններու սփռումները պիտի արձանագրէ համացանցը օգտագործողներուն: Անայժմ [www.televisionarchive.com](http://www.televisionarchive.com) հասցեով այս կայքին մէջ տեղադրուած են գլխաւորաբար Սեպտեմբեր 11-ի ահաբեկչական գործողութեան մասին աշխարհի տարածքին պատկերասփիւռի կայաններուն անմիջական տեղեկատուութիւնները:

## ԼՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՆՏՈՂ ՈՐՈՆՈՒՄԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- <http://news.altavista.com>
  - [www.alltheweb.com/](http://www.alltheweb.com/)
  - [www.daypop.com](http://www.daypop.com)
  - [www.moreover.com/](http://www.moreover.com/)
  - <http://news.yahoo.com>
  - [www.nct2one.com](http://www.nct2one.com)
  - [www.rocketnews.com](http://www.rocketnews.com)
  - [www.northernlight.com/](http://www.northernlight.com/)
  - [www.ananova.com](http://news.ananova.com)
  - [www.newsindex.com](http://www.newsindex.com)
  - [www.newstrawler.com](http://www.newstrawler.com)
- Նշենք, որ վերոյիշեալ կայքերուն մեծամասնութեան պարագային, փնտռուողի ընթացիկ կարելի է ճշգրիտ, թէ վերջին քանի՞ օրերու լուրերուն մէջ հարկ է փնտռել տուեալ լուր մը:

## ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՖՈՐՈՒՄԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ



1998ին հիմնուած Եւրոպայի Հայկական Միութիւններու Ֆորումը կը համախմբէ եւ գործակցութեան առիթներ կը ստեղծէ Եւրոպայի 16 երկիրներու մէջ գտնուող հայկական միութիւններու միջեւ: Ֆորումը վերջերս մեծ աշխատանք տարաւ, որպէսզի Եւրոպական Խորհրդարանի անդամակցութեան համար Թուրքիոյ դարձեալ պայման դրուի Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը:

Ֆորումին պաշտօնական կայքը [www.armenianforum.org](http://www.armenianforum.org) կ'ընդգրկէ լուրերու բաժին մը, որ կը ներկայացնէ Ֆորումին վերջին հանդիպումներն ու ձեռնարկները, Ֆորումի ծրագիրներուն յատկացուած բաժին մը, Եւրոպայի Հայ Գործարարներու Ֆորումին գործունէութեան անդադարձող բաժին մը եւ Եւրոպական Միութեան հետ Ֆորումի կապի գրասենեակին հետ առնչուող տեղեկութիւններու բաժին:

Կայքին կարգ մը բաժինները տակաւին պատրաստութեան ընթացքի մէջ են:

## ԹՐԵԱԿԱՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ ՀԱԿԱՀԱՅ ՆՈՐ ԿԱՅՔ ՄԸ «ԹԻՒՐԲԱԹԱՔ»



Համացանցի «Թիւրքաթաք» կայքին մայր էջը քիչ մը ամէն բանի մէջ ցոլացումն է այսօրուան Թուրքիոյ: Այնտեղ կը գտնենք թրքական դրօշներ, Աթաթիւրքի լուսանկարներ, Թուրքիոյ բանակին յատկացուած աչքառու բաժին մը եւ... ապատեղեկատուութիւն. բառ մը, որ շատ մեղմ կը թուի բաղդատաբար կայքին մէջ տեղ գտած սուտերուն եւ խաբէութեանց:

Թրքերէնով պատրաստուած [www.turkatak.gen.tr](http://www.turkatak.gen.tr) հասցեով այս կայքը ընկանաբար չէ մոռցած նաեւ հայերը: Կայքին գլխաւոր էջին վրայ տեղադրուած է «լինք» մը՝ «Այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութիւնը» խորագրով, որ այցելուն կ'առաջնորդէ [www.armenisorum.gen.tr](http://www.armenisorum.gen.tr) կայքը, ուր թրքերէն, անգլերէն, գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուներով կը ներկայացուի Հայկական Հարցը՝ թրքական ծանօթ մեկնաբանութեամբ:

Աւելին. «Թիւրքաթաք» կայքի «հարցեր» բաժինով ներկայացուած են այսպէս կոչուած ուսումնասիրութիւններ՝ հայկական, յունական, ասորական, կիպրական եւ քրտական հարցերուն մասին: Իւրաքանչիւր բաժին ամսական դրութեամբ կը վերաթարմացւի նորագոյն լուրերուն եւ զարգացումներուն նուիրուած յօդուածներով: Այս բաժիններուն մէջ վերոնշյալ բոլոր ժողովուրդները, դերերու շրջանով, կը ներկայացնեն իրրեւ ջարդարաբար, իսկ Թուրքիա ինքզինք պաշտպանել փորձող «գոհ»:

Պատրաստեց՝ Խ. Մ.

[www.hamazkayin.com](http://www.hamazkayin.com)

# Մանկապատանեկան


## ԻՆՉՈ՞Ւ...

Կը խոկաս, քիթը կը վազէ, մկանացուցներ ունիս... մարմինդ ունի տարօրինակ սովորութիւններ: Փորձե՛՛նք հասկնալ ինչու:

● Ինչու՞ կը խոկաս  
Կոկորդիլ խորքը գտնուող զանգակի ձեւով քիմքի լեզուակը աւելի դուրսից կը դառնայ քունի ընթացքին: Երբ մենք օդը կը կլլենք, այս զանգակը կը թրթռայ եւ կը յառաջացնէ... շոգեկառքի ձայնին նմանող ձայն մը:

● Ինչու՞ մեր ակնակներուն մէջ ազոտոտութիւն կայ  
Անիկա ազոտոտութիւն է: Մեր ակնակներուն մէջ դեղին - սրճագոյն նիւթը մեղրամոմի նման նիւթ մըն է: Բոլոր մարդիկը կ'արտադրեն այդ նիւթը, սակայն կարգ մը անձեր՝ ուրիշներէ աւելի: Այս նիւթը հական դեր ունի. ան կ'արգիլէ, որ փոշին եւ խոնաւութիւնը ակնակներուն մէջ թափանցեն:

● Ինչու՞ քիթը կը վազէ  
Բնական պայմաններուն մէջ քիթը պէտք է վազէ: Երբ մենք հար-



բուս կ'ըլլանք, տարօրինակ նիւթեր կը թափանցեն մեր քիթին մէջ, ինչ որ իր կարգին պէտք է զանոնք դուրս թափէ: Այս պատճառով մեր քիթը կը վազէ:

● Ինչու՞ մենք շիւ կը ցալիցը  
Մենք շիւ կը նայինք, երբ մեր աչքին մկանները կ'ունենան թերուածութիւն մը, որ իրենց արգելէ կ'ըլլալ նոյն ուղղութեամբ նայելու: Եթէ այս մկանները դէպի ակնակները կը քաշեն, մենք մեր քիթին կը նայինք: Եթէ անոնք դէպի քիթ կը քաշեն, մենք դէպի ակնակները կը նայինք: Հետեւաբար գոյուցիւն ունի շիւ նայելու երկու տեսակ: Եթէ դուն այս թերութիւնը ունիս, վախնալու հարկ չկայ. մասնազէտի մը օգնութեամբ

մարզումի քանի մը փորձէ ետք նայուածքդ կրնայ շտկուիլ:

● Ինչու՞ մկանացուցներ ունիցը  
Մկանացուցները յանկարծակի ձեւով կրկնուող եւ անհակադրելի շարժումներ են: Օրինակի համար, եղունգները կրծել, աչք քիթել, քիթը վեր քաշել: Անոնք յաճախ մտահոգութիւն մը, անձկութիւն մը կամ անհանգստութիւն մը կ'արտայայտեն:

Անոնցմէ ձերբազատելու միակ միջոցը: Մտածէ. մտահոգութիւն մը ունի՞ս, բան մը կա՞յ, ո՞ր իսկապէս միտքդ զբաղեցնէ: Դժուարութիւններ կը դիմագրասես: Փորձէ յուժումներ գտնել անոնց՝ դիմելով քեզմէ մեծերուն խորհուրդին:

Կեղծարարը կը կապուի երրորդ պարան մը, որուն ծայրը անցուած կ'ըլլայ շաքարի կտոր մը: Երկու խաղացողները պիտի փորձեն շաքարը անցընել զետիւնը գետեղուած շիւի մը բերանին մէջէն:



Ինչու՞ մեր ակնակներուն մէջ ազոտոտութիւն կայ  
Անիկա ազոտոտութիւն է: Մեր ակնակներուն մէջ դեղին - սրճագոյն նիւթը մեղրամոմի նման նիւթ մըն է: Բոլոր մարդիկը կ'արտադրեն այդ նիւթը, սակայն կարգ մը անձեր՝ ուրիշներէ աւելի: Այս նիւթը հական դեր ունի. ան կ'արգիլէ, որ փոշին եւ խոնաւութիւնը ակնակներուն մէջ թափանցեն:

Ինչու՞ քիթը կը վազէ  
Բնական պայմաններուն մէջ քիթը պէտք է վազէ: Երբ մենք հար-

## ՏՕՆԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՐԿՈՒՆԿՈՒ

Աւելի քան չորս դարէ ի վեր Նիկերիոյ մէջ մարդիկ կը տօնեն Արկունկուն՝ ձկնորսութեան տօնը: Ան կը տօնակատարուի Ռիմա գետին ափերուն՝ նշելու համար ձկնորսութեան եղանակին աւարտը: Մարդիկ կը հագնին ձուկի պատկերներով զարդարուած հագուստներ եւ մրցումներ կը կազմակերպուին: Անշուշտ ամէնէն սպասուած մրցումը ձկնորսութեան մրցումն է: Բազմաճարիւր մասնակցողներ երկուքական ցանցերով կ'իջնեն ծով: Կը յաղթէ ամէնէն մեծ ձուկը որսացողը:

### ԱՅԼԱԶԱՆ

#### Ո՞Վ ՀՆԱՐԱԾ Է ԳՆԴԻԿՈՎ ԳՐԻԶԸ

#### ԼԱՁԼՕ ՊԻՐՕ:

1930ական թուականներուն այս հունգարացին կը մտածէ մեյանով գրիչի մը ծայրը մետաղեայ պղտիկ գնդիկ մը դնել: Թուղթին վրայ սահելով՝ գնդիկը ինքն իր վրայ կը դառնայ եւ իր շարժումին մէջ մեյանին հետքը կը ձգէ թուղթին վրայ:



#### ԻՆՉՈ՞Ւ ՄԱՐԶԱՆՔԻՆ ԱՌԱՋ ԿԱՐԵՒՈՐ Է ՄԿԱՆՆԵՐԸ ՏԱՔՑՆԵԼ

#### ԱՐԿԱՇՆԵՐԸ ԽՈՒՍՎՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Խաղէ մը կամ մրցումէ մը առաջ մկանները աշխատեցնելը, զանոնք կամաց-կամաց փորձի պատրաստելը հական է: Եթէ մարզիկը մկանները չտաքցնէ, քիչ մը զօրաւոր շարժումի պարագային ան կրնայ ճմլումի, պատուածքի կամ գայարու մի ենթարկուիլ:



#### ԿԵՂՇԱՄՆԵՐԸ ԻՍԿԱԿԱՆ ՄԱՁՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԵՆ

#### ԵՐՐԵՄ:

Կարգ մը կեղծամներ շինուած կ'ըլլան իսկական մագով, իսկ ուրիշներ՝ արուեստական նիւթերով, որոնք իսկական մագի շատ կը նմանին: Այս կեղծ մագերը թեթեւ կ'ըլլան, դիւրութեամբ կը սանտրուին եւ իսկական մագերէ նուազ տաք կը պահեն:



#### ԻՆՉՈ՞Ւ ՏԱՔ ՕՂԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

#### ՈՐՈՎՀՆՏԵՒ ԱՆ ԱՒԵԼԻ ԹԵԹԵՒ Է:

Տաք օդը շատ աւելի թեթեւ է, քան պաղ օդը, եւ բնականաբար, երկինքին մէջ կը բարձրանայ: Մինչ պաղ օդը գրեթէ գետնին կը փակչի, կարծէք կ'ամչնայ այդքան ծանր ըլլալէն:




Գիտէ՞՞ր, թէ օդի այս շարժումներն են, որոնք կը յառաջացնեն օդի հոսանքները եւ հովերը:

#### Ո՞ՐՆ Է ԼՈՒՔՍԱՄՊՈՒՐԿԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

#### ԼՈՒՔՍԱՄՊՈՒՐԿ:


Լուքսամպուրկ քաղաքը մայրաքաղաքն է Եւրոպայի ամէնէն փոքր պետութեան: Ան ունի 80 հազար բնակիչ: Այս գեղեցիկ քաղաքը կոչուած է նաեւ «կամուրջներու քաղաք», որովհետեւ ան ունի աւելի քան հարիւր կամուրջ:




#### «ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՃԱՄՐ 5:00: ՄԱՂԱՋԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:


## ԺԱՄԱՆՅ




Այս թափանցիկ սնուկին մէջ մեծ թիւով շիւներ կան: Անոնց մեծ մասը կոտրուած է սակայն: Զանգ՝ լսան շիւներ կը տեսնես:



Կրնա՞ս ամբողջացնել պատկերը՝ գիծերը շարունակելով:



Տունն ո՞րն է: Երբ տունն դուրս կ'ելլեն, կը քալեն ձախ կողմի ձամբայէն: Ապա կը դառնան աջիս առաջին փողոցը: Իսկ թէ ուղղուիմ յաջորդ աջիս ձամբան, կը գտնուիմ տանս առջեւ: Պատուհանն կը տեսնեն դիմացի պատիկ լիճը: Իսկ թէ տունն ելլելու ժամանակ դարձեալ ձախ դառնամ, եւ ապա հետեւիմ աջիս առաջին փողոցին, ես դպրոցին առջեւն պիտի անցնիմ: Կրնա՞ս գտնել տանս դիրքը քարտեսին վրայ:



Կրնա՞ս գտնել վերի տախտակը ամբողջացնող երկու տուփիկները:  
Պատրաստե՛ք շՈՂԻԿ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

## ԽԱՂԱՆԵ

### ԶԲՕՍԱՆՔԻ ԸՆԹԱՅՔԻՆ

1) Հետաքրքիրներու խաղը  
Նշանակուած անձ մը կունակը դրան կը կանգնի: Անոր ընկերներէն մէկը լուռ կ'անցնի դրան ետեւը եւ աչքը կը դնէ բանալիի ծակին: Առաջին խաղացողը կը դառնայ եւ ինքն այ կը նայի ծակին



միւս կողմէն եւ պէտք է կռահէ, թէ ո՞վ կը գտնուի

2) Ծաքարի խաղը  
Երկու խաղացողներ պարան մը կը կապեն իրենց գլխուն շուրջ եւ ապա՝ երկու պարանները իրարու:



Իրարու միացուած այս առաջին պարաններուն

3) Իշուկին հետ  
Խաղացող մը կունակին վրայ կը կապէ պարան մը, որուն ծայրը մինչեւ գետին կը հասնի: Ասիկա իշուկին պոչն է: Միւս խաղացողները պիտի փորձեն անոր պոչին վրան քայլել: Երբ մէկը պոչին վրայ կարենայ կռիւի, իշուկը կը փոխուի:

**ԿՈՒՉՈՒԻՆ**  
● Կարպետ եւ փորձառու աղամանդաշարներ:  
Շեռ. 03-862901:

**ԿՈՒՉՈՒԻ**  
● SARO հաստատութիւնը կարիքը ունի փորձառու քարտուղարուհիի մը, արաբերէն, անգլերէն եւ համակարգիչ գործածելու գիտնալը պայման. գիմել հեռ. 01-257983-4:

**STUDIO Lantern**  
● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ  
Շեռ. 01-266866  
ԵՒ 03-695399

**ՏԱՐԵԴԱՐՁԻ ԼԱԽԱԳՈՅՆ ՆՈՒԵՐ**  
VIDEOԻ ԿԱՍ ՇՈՒ ՎՐԱՅ  
VIDEO CLIPՆԵՐ  
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ  
Դիմել՝ ԱՐԱ ԶԵԼԵԾԱՆ ՀԱՍ.  
Շեռ. 01 / 261696, 03 / 250518

**Շ.Բ.Ս. Պ. Գ. ԿԱՐՄԻՐԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿԱՐԺԱՐԱՆ**  
ԵՐԶԱՆԱԿԱՐԳՍԻՑ ՄԻՈՒԹԻՆ  
**ՅՈ՞ՒՆ ԵՐԹԱՍ ՀԱՅ ԳՊՐՈՑ...**  
Շրտապ գրայցի կը մասնակցի՝  
**ՆՈՐԱ ՍԻՒԼԱՇԵԱՆ**  
**ՇՐԱՅ ԳԱՐԱՍԱՆՈՒԿԵԱՆ**  
**ԱՐԱՆ ԻՌՆԵՂԵԱՆ**  
**ՍԵՊՈՒՑ ՄԻՋԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:00ին, Պողոս Գ. Կարմիրեան միջնակարգ վարժարանի հանդիսարանին մէջ:  
**ՇՐԱԵՐ**



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՎԱԳՐԸ՝ ՌԱՍԻՆԿ - Հ. Մ. Ը. Մ.

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 16րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի տեղի կ'ունենան հինգ ճակատումներ, մինչ մնացեալ երկուքը տեղի կ'ունենան երկուշաբթի օրը:

Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը, որ վաղը՝ Կիրակի Պուրճ Համուտի Քաղաքացի-տարանի դաշտին վրայ պիտի ճակատի Ռասինկի դէմ, տակաւին կը սպասէ եղանակի իր առաջին յաղթանակին:

Պարագուելի դիրքը գրաւող Սաթէս աւելի հանգիստ մրցում մը ունի կատարելիք, երբ ճակատի ԱՀԻ Սայտայի դէմ, քան շրջ դիրքը գրաւող Նրոմէն, որ իր դէմ պիտի ունենայ Հ. Մ. Մ. ք: Հ. Մ. Մ. - Նրոմէն մրցումը, որ սկզբունքով տեղի պիտի ունենար ժամը 2:45ին, պիտի կատարուի ժամը 4:45ին:

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը իր գումարած վերջին ժողովին, վաւերացնելէ ետք 15րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, յայտարարեց 11 մարզիկներուն անունները, որոնք իրենց երրորդ դեղին քարտը ստանալով՝ պիտի բացակային 16րդ հանգրուանի մրցումներէն:

Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ունենալիք մրցումէն, Ռասինկէն պիտի բացակայի Մոհամէտ Մըսարի, իսկ Նրոմէնի դէմ տեղի ունենալիք մրցումէն՝ Գէորգ Կարպետեան (Հ. Մ. Մ.):

Ֆետերասիոնը մէկ տարիով կախակայեց Ախա ԱՀ-ի Ալէյի պատասխանատուներէն՝ Զիատ խուրը, որ Ատի դէմ տեղի ունեցած մրցումին հայեցած էր իրաւարարին:

Նշենք, թէ այժմ կուսորդներու ընդհանուր դասաւորման պարագուելի դիրքը կը գրաւէ Շապապ Սահէլի մարզիկ Մահմուտ Մաժիտ, որ նշանակած է 13 կող, մինչ Մոհամէտ Ասաս (Սաթէս)՝ 12 կող:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:	ԺԱՄ ԴԱՇՏ
Ահլի Սայտա - Սաթէս	2:45ին Սաֆա
Սայամ - Ախա Ալէյ	2:45ին Թրիփոլի
Ռասինկ - Հ. Մ. Ը. Մ.	2:45ին Պ. Համուտ
Հ. Մ. Մ. - Նրոմէն	4:45ին Պէյրութ
Ահա - Թ. Սուր	4:45ին Մ. Աւան
<b>ԵՐԿՈՒՇԱՐԹ</b>	
Պըրճ - Սաֆա	2:45ին Պէյրութ
Շապապ Սահէլ - Ահաս	4:45ին Մ. Աւան

**Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԿԻՆԻՎ**

**ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱԶԱՐ**

Կազմակերպութեամբ՝  
**Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԵՅՐՈՒԹԻ**  
**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Մարտ 2002ին, կէսօրէ ետք ժամը 2:00էն սկսեալ, քաղաքի ակումբին մէջ:

**ՄԱՍՆԱԿՅԵ՛ ԵՒ ՇԱՀԵ՛**

24 Մարտին տեղի ունենալիք «Օսքար»ներու 74րդ մրցանակաբաշխութեան ճակատակից, «Ազդակ» կը կազմակերպէ «Օսքար»ի հաւանական մրցանակակիրները ձեռնարկ մրցանք մը, որ պիտի երկարի 8էն 23 Մարտ:

**ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԵՅՐՈՒՆԵՐ**

- 1.- Մրցումին կրնան մասնակցիլ բոլորը, բացի «Ազդակ»ի անձնակազմէն եւ աշխատակիցներէն:
- 2.- Հարցումին պատասխանել՝ նախընտրաբար չոր մեյլանով նշելով ձեռնարկ մը քաժինին մէջ գրելով «Օսքար»ը շահողին ձեռնարկ տեսնելու համար:
- 3.- Պատասխանները եւ մասնակցութեան կտրոսները անընդմեջ եւ տեղ, պահուած նշումները կտրել եւ փակ պահարանի մը մէջ դրած՝ յանձնել «Ազդակ»ի խմբագրատուն, ամէնէն ուշը մինչ 23 Մարտ 2002ի կէսօրին: Պատասխանները կարելի է յանձնել նաեւ հետեւեալ կերպով՝ նշումներէն որեւէ մէկուն.
  - Գրատուն «Օպիլիքս» - Անթիլիաս
  - Գրատուն «Սուա» - Այնճար
  - Գրատուն «Կոմիտաս» - Պէյրութ
  - Գրատուն «Ուրֆայեան» - Պուրճ Համուտ
  - Գրատուն «Քարպիլ» - Չալիպա
  - Ազգ. Նուպարեան-Խրիմեան վարժարան - Թրիփոլի
- 4.- Մրցումը «Ազդակ»ին մէջ պիտի հրատարակուի վեց հանգրուանով: Իւրաքանչիւր հանգրուան բաղկացած պիտի ըլլայ թեկնածուներուն չորս քաժիններէ (ընդհանուրը՝ 24 քաժին): Մրցումին առաջին երկու մասերէն իւրաքանչիւր յայտարարուած նշումները կ'որոշուին ընթացքին, իսկ մնացեալ չորս մասերէն իւրաքանչիւրը՝ յաջորդական երկու օրերու ընթացքին: Մասնակցողները կրնան զրկուի միայն մէկական լուծում, որուն համար պէտք է գործածուի թերթէն կտրուած կտրոս մը: Լուսապատէն կամ ընդօրինակութիւն ընդունելի չեն:
- 5.- Իւրաքանչիւր ձեռք պատասխանի համար մասնակցողը կը ստանայ մէկ կէտ: Բոլոր հարցումներուն ձեռք պատասխանողները կը ստանան 24 կէտ:
- 6.- «Օսքար»ներուն արդիւնքները, առաւելագոյն կէտ հաւաքողներուն եւ մրցանակաւորներուն անունները պիտի յայտարարուին հետագային: Իւրաքանչիւր հանգրուանի պահանջուած կէտերու գումարը մէկէ աւելի մասնակցողներու կողմէ ապահովուելու պարագային, մրցանակաւորներուն անունները պիտի որոշուին վիճակագրութեամբ: Բախտաւորներուն դասաւորումը պիտի կատարուի

## ՀԱՅՐԵՆԻ ԸՍԲԻՇՆԵՐԸ ՊԻՏԻ ՄԵԿՆԻՆ ՊԱԸՈՒ

Այս տարի Պաքուի մէջ տեղի ունենալիք Եւրոպայի ըմբշամարտի ախոյեանութեան մրցաշարքին իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայաստան, կը յայտնէ Հայաստանի մշակույթի, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան փոխ նախարար Իշխան Չաքարեան:

Չաքարեան, Սուրբ Լէյք Սիթիի մէջ հանդիպում մը ունենալով Ալբանիայի ըմբշամարտի ֆետերասիոնի նախագահին հետ, որ միեւնոյն ժամանակ 2002ի Ողիմպիականին Միացեալ Նահանգներ գտնուող Ալբանիայի պատմական իրաւունքներ Սաթէս (Լիբանան), Քըրք (Իրաք), Զուպ Ահմէտ (Իրան) եւ Օրթոթոքի (Յորդանան):

Մրցաշարքը հիւրընկելի Պաքու: Ալբանիայի ըմբշամարտի ֆետերասիոնի նախագահը Իշխան Չաքարեանի մէջ տեղի ունենալիք մրցումներուն մասին խորհրդակցութեան ժամը 128-71, այսօր՝ Շաբաթ իր երկրորդ մրցումը կը կատարէ իրանեան կազմին դէմ:

Նշենք, թէ այս մրցաշարքին առաջին հանգրիւսացող խումբը, կ'ապահովէ Ասիոյ ասոյցնաւորներուն աւարտական մրցաշարքին իր տոմարը: Մրցաշարքը տեղի կ'ունենայ յունիստի 28 Ապրիլին 5 Մայիս, Քուալա Լամպուրի մէջ (Մալեզիա):

Մրցաշարքը հիւրընկելի Պաքու: Ալբանիայի ըմբշամարտի ֆետերասիոնի նախագահը Իշխան Չաքարեանի մէջ տեղի ունենալիք մրցումներուն մասին խորհրդակցութեան ժամը 128-71, այսօր՝ Շաբաթ իր երկրորդ մրցումը կը կատարէ իրանեան կազմին դէմ:

## Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍ

**ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ**

**ՀԱՐԱՄԹ. 9 ՄԱՐՏ**

Ճեմարան - Սոֆիա Յակոբեան (փոքր) ժամը 2:30ին

Թորոսեան - Քաղաքի Հայ Աւետ. (մեծ) ժամը 3:00ին

Ս. Խանամիրեան - Շամլեան - Թաթիկեան (փոքր) ժամը 3:40ին

Ս. Քառասնից Մանկանց - Սոֆիա Յակոբեան (փոքր) ժամը 4:10ին

Արգարեան - Գ. Չաքարապետեան (փոքր) ժամը 4:40ին

**ԿԻՐԱԿԻ. 10 ՄԱՐՏ**

Գրեթեմար - Եղիշէ Մանուկեան կամ Արգարեան (փոքր) ժամը 2:30ին

Յովակիմեան - Ճեմարան (մեծ) ժամը 3:00ին

Եղիշէ Մանուկեան կամ Արգարեան - Ս. Խանամիրեան կամ Շամլեան - Թաթիկեան (փոքր) ժամը 3:40ին

Կ. Բ. Վ. - Ս. Հոփսիմեանց (մեծ) ժամը 4:10ին

հետեւեալ ձեւով.  
20-24 կէտ հաւաքողը պիտի ստանայ Պէյրութ - Լուստոն - Պէյրութ օդանւթի տոմսակ մը.  
10-19 կէտ հաւաքողներէն երեք հոգի պիտի ստանան անգլիական ոսկի մը., «Մանիօ» Սի. Տի. Փլէյթը մը, շարժապատկերի 10 տոմսակ եւ 10 թիշերթ:

● Նշենք, որ կէտերու իւրաքանչիւր դասաւորումէն պիտի ընտրուի միայն մէկ մրցանակաւոր:

**Ա. ՄԱՍ**

- 1.- ԼՍԻՄԳՈՅՆ ԳԼԽԱՒՈՐ ԳԵՐԱՍԱՆ
  - Ռասուլ Քրոնո («Ա պիտի ֆոնու մայնտ»)
  - Շան Փէն («Այն էմ Սէմ»)
  - Ուիլ Սմիթ («Այի»)
  - Տենպըլ Ուաշինկըն («Թրէյնինկ տէյ»)
  - Թոմ Ուիլքինսոն («Ին տը պէտրում»)
- 2.- ԼՍԻՄԳՈՅՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԳԵՐԱՍԱՆ
  - Ճիմ Պրոտպէնք («Այրիս»)
  - Իթըն Հոք («Թրէյնինկ տէյ»)
  - Պէնի Քինկլի («Մէքսի պիսք»)
  - Սլայն Մաքքելըն («Տը լորտ աֆ տը ռինկ»)
  - Ճոն Վուսթը («Այի»)
- 3.- ԼՍԻՄԳՈՅՆ ԳԼԽԱՒՈՐ ԳԵՐԱՍԱՆՈՒՅԻ
  - Հէյ Պերի («Մոնսթրը պրո»)
  - Ճիւտի Տենչ («Այրիս»)
  - Նիքոլ Քիտմըն («Մուլէն Ռուտ»)
  - Սիւսի Սփէյսէք («Ին տը պէտրում»)
  - Ռեյնէ Զելուկըր («Պրիմիթ ճոնս տայլըրի»)
- 4.- ԼՍԻՄԳՈՅՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԳԵՐԱՍԱՆՈՒՅԻ
  - Ճենիֆըր Քոնէլի («Ա պիտի ֆոնու մայնտ»)
  - Հէյն Միլեյն («Կոսթրոն փարք»)
  - Սիլի Սմիթ («Կոսթրոն փարք»)
  - Մարիսա Թոմի («Ին տը պէտրում»)
  - Քէյթ Ուիլսոն («Այրիս»)

**ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

ԱՆՈՒՆ ..... ՀՕՐ ԱՆՈՒՆ.....

ՄԱԿԱՆՈՒՆ.....

ՏԱՐԻՔ..... ՀՌԱՍՏԱՅՆ.....

ՉԲԱՂՈՒՄ.....

ՀԱՍՅԵ՛.....

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթավերջին, Իտալիոյ, Գերմանիոյ եւ Սպանիոյ մէջ տեղի պիտի ունենան ախոյեանութեան մրցումները, որոնց ընթացքին կը սպասուին ըլլալ հետաքրքրական ճակատումներ: Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ ախոյեանութեան մրցումներ տեղի պիտի չունենան, այլ՝ բաժակի մրցաշարքի քառորդ աւարտական ճակատումներ:

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 26րդ հանգրուանի գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ այսօր, ուր «Սան Սիլո»-ի մէջ, Ինթեր Միլան պիտի հիւրընկալէ Եուվեթուսը: Պարագուելի դիրքը գրաւող Ինթեր, որ այժմ մէկ կէտի առաւելութիւն ունի շրջ դիրքը գրաւող Եուվեի վրայ, յաղթանակ կամ հասարութեանէն այլընտրանք չունի, այլապէս կրնայ կորսնցնել պարագուելի դիրքը:

Մնացեալ մրցումներուն ընթացքին, որոնք բոլորն ալ տեղի պիտի ունենան վաղը, տեղի պիտի ունենայ այլ կարեւոր մրցում մը. Հոմի տերպիին Լացիօ Ռոմա պիտի ճակատի Ա. Էս. Ռոմայի դէմ:

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունտլալիկա) 26րդ հանգրուանին տեղի պիտի ունենայ Միւնիխի տերպիին, որուն ընթացքին Պայէրն Միւնիխ պիտի ճակատի 1860 Միւնիխի դէմ:

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 29րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնա (4րդ) կարեւոր ճակատում մը ունի կատարելիք, երբ այցելէ Ռէալ Պէթիսի (5րդ) դաշտը: Անոնք երկուքն ալ ունին 46ական կէտ:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (մրցումներուն ժամերը՝ Պէյրութի ժամանակացոյցով):

**ԶԱԿՅՈ (26րդ հանգրուան)**

**ԱՅՍՕՐ**

Ինթեր Միլան - Եուվեթուս 21:30ին

**ՎԱԳՐ**

Աթալանթա - Լեչէ 16:00ին

Պոլոնիա - Ա. Սէ. Միլան 16:00ին

Ֆիորենթինա - Ուտինետե 16:00ին

Փիաչենցա - Փերուցիա 16:00ին

Թորինօ - Քիեցօ Վերոնա 16:00ին

Վենցիա - Պրեշիա 16:00ին

Վերոնա - Փարմա 16:00ին

Լացիօ Ռոմա - Ա. Էս. Ռոմա 21:30ին

**ՍՊԱՆԻԱ (29րդ հանգրուան)**

**ԱՅՍՕՐ**

Ռեալ Մարսիա - Վիարեալ 21:00ին

Ռեալ Պէթիս - Պարսելոնա 21:30ին

Տեֆորթիս Քորուեա - Ռախօ Վալեքանօ 22:30ին

Լա Փալմա - Ալաւես 23:00ին

**ՎԱԳՐ**

Էսփանիոլ - Աթլետիքո Պիլասօ 18:00ին

Մալախ - Ռեալ Սարսկոսա 18:00ին

Մալորքա - Օսասունա 18:00ին

Վալենսիա - Սելիլլա 18:00ին

Ռեալ Վալադոլիտ - Սելթա Վիլո 18:00ին

Ռեալ Սոսիետատ - Թենիքիթե 21:00ին

**ՊՈՒՆՏՐԱԿԱ (26րդ հանգրուան)**

**ԱՅՍՕՐ**

Պայէրն Միլանիս - 1860 Միլանիս 16:30ին

Պայէր Լեյքերքուզըն - Քոպպուս 16:30ին

Չալքէ Փաուլի - Ֆրայպուրկ 16:30ին

Նիւրնբերկ - Վերտըր Պրեմըն 16:30ին

Վոլֆսպուրկ - Քէլն 16:30ին

Հանգա Ռոսթրը - Քալդրուսուրքըն 16:30ին

Պորուսիա Տորքոնիոն - Պորուսիա Մէտցընկլաուպախ 16:30ին

**ԱՆԳՐԱՆ (ԱՆԳՐՈՅԻ ՔԱՏԱԿԻ ՄՐԿԱՇԱՐՔԻ ԶԱՌՈՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ)**

**ԱՅՍՕՐ**

Նիւքտըլ - Արսենալ 19:30ին

**ՎԱԳՐ**

Միտլանդս - Էվերթըն 15:00ին

Թորքենհամ - Չելսի 18:00ին

Ուեսթ Պրոմուիչ - Ֆուլհեմ 20:30ին

**ՖՐԱՆՍԱ (Ֆրանսայի Լիկայի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտական)**

**ԱՅՍՕՐ**

Լիպուզն - Սէնթ - Սէորից (Բ.) - Պասիա 16:00ին

Փարիզ Ս. ժ. - Լորիան 18:00ին

Սըրան - Ռասինկ Սթրազպուրկ (Բ.) 21:30ին

**ՎԱԳՐ**

Նիմ (Բ.) - Մոնպօ 20:00ին

**ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ**

Օրսէն - Պրոսո 21:45ին

